ԱՄՐԱԿԱՅՈՒՄ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Է.Կ.Կ.Օ.
ԱՄՐԱԿԱՅՈՂ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

© E.C.C.O. 2011 – Ամրակայող-վերականգնողների կազմակերպությունների
եվրոպական միություն
A.I.S.B.L. / Confédération Européenne des Organisations de Conservateurs-Restaurateurs
A.I.S.B.L.

Սյուզան Կորր, Համակարգող (ICHAWI, Իռլանդիա)
Ջերեմի Հաչինգս (NKF-N, Նորվեգիա)
Յաապ վան դեր Բուրգ (Restauratoren Nederland, Նիդերլանդներ)
Դավիդ Ագույլելա (FFCR, Ֆրանսիա)
Մեչվիլդ Նոլ Մինոր (VDR, Գերմանիա)
Ագնես Գալ Օրտլիկ (Grup Tècnic, Իսպանիա)
Սեբաստիան Դոբրուսկին (SKR-SCR, Շվեյցարիա)
2-րդ հրատարակություն

PDF տարբերակով
ISBN 978-92-990010-7-3
Կազմող՝ Սեբաստիան Դոբրուսկին (SKR-SCR, Շվեյցարիա)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ 4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5
ԱՅՍ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ..... 6
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ..... 6
ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 7
ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 9
ՑԿՅԱՆՍ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ/ԱԿՐԵԴԻՏԱՑԻԱ..... 11
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ 2005/36/ԵՀ/ ԵՈՇ 12
ԴԵՊԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ-ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԱԳԻՐԸ 13
ԱՄՐԱԿԱՅՄԱՆ-ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ 7-ՐԴ ՄԱԿԱՐԴԱԿԻ (ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԱՍՏԻՃԱՆ) ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ..... 14
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊՐՈՖԻԼԱՎՈՐՈՒՄ..... 17
ԳԻՏԵԼԻՔԻ ՀՄՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 22
ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ..... 22
ՀՄՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 24
ԵՈՇ 7-ՐԴ ՄԱԿԱՐԴԱԿ 28
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ..... 29
ԱՄՐԱԿԱՅՄԱՆ-ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 29
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ..... 31
ԵՈՇ 6-ՐԴ ՄԱԿԱՐԴԱԿ 31
ԵՈՇ 6-ՐԴ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ 31
ԵՈՇ 8-ՐԴ ՄԱԿԱՐԴԱԿ 32
ԵՈՇ 8-ՐԴ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ 32
ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 45
ՀՂՈՒՄՆԵՐ..... 46
ՊԱՏԿԵՐՆԵՐ 48

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Այս հրատարակությունը բարեհաջող ավարտին հասցնելով՝ Է.Կ.Կ.Օ.-ն ցանկանում է իր երախտագիտությունը հայտնել նախորդ կոմիտեի անդամներին՝ մասնագիտական պրոֆիլավորման խնդրի լուծման մեջ ունեցած ավանդի համար: Ամրակայողների եվրոպական լիցենզիայի (ԷՍՓԼ)[1] նախագծի համար իրականացված աշխատանքը ևս ուսանելի էր: Շնորհակալություն ենք հայտնում գրախոս Մաուրա Բորելին, ԷՍՓԼ-ից, աշխատանքային խմբի նախնական հանդիպման ժամանակ իր շնորհանդեսի համար:

Մասնագիտական ունակությունների ձևավորման աշխատանքի առաջընթացին զուգընթաց, ստացել և բարձր ենք գնահատել հետադարձ կապն ու քննադատական մեկնաբանությունները, մասնավորապես 2009 թվականին Սոֆիայում անցկացվող Գլխավոր ասամբլեայի մասնակիցների և հատկապես Վոլֆգանգ Բաատցի (Ամրակայման-վերականգնման կրթության եվրոպական ցանց (ԷՆԿՕՌԵ)), Սիգրիդ Այբ-Գրինի (Վերականգնողների ավստրիական ասոցիացիա (ԱՌՎ)[2] և Դենիս Վոկիչի (Խորվաթիա) կողմից ստացած մեկնաբանությունները:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում ԷՆԿՕՌԵ-ի նախագահ Ռենե Լարսենին իր ջերմ հյուրընկալության համար Կոպենհագենում, որտեղ երկու կազմակերպությունների անդամները հանդիպեցին համաձայնեցնելու Եվրոպական որակավորումների շրջանակի (ԵՈՇ) 7-րդ մակարդակի նկարագրիչները:

Տարբեր երկրներից գործընկերների հետ աշխատելու լոգիստիկան առաջադրում է իր ուրույն մարտահրավերները, և Է.Կ.Կ.Օ.-ն շնորհակալ է Ամրակայող-վերականգնողների ֆրանսիական ֆեդերացիային (ՖՖԿՌ)[3], որն իր պատվիրակի՝ Դավիդ Ագույլելա Կուեկոյի միջոցով տրամադրեց իր տարածքները, ուր, իջեցված շերտավարագույրներով, աշխատանքային խմբի անդամները հանդիպեցին բազում արևոտ, հանգստյան օրերի ընթացքում: Շնորհակալություն նաև Յաապ վան դեր Բուրգին Հելիկոն ամրակայումից ավարտական հանդիպումը Նիդերլանդներում հյուրընկալելու համար:

Եվ վերջապես, երախտիքի խոսք ենք հղում Է.Կ.Կ.Օ.-ի կոմիտեի բոլոր անդամներին իրենց ինտելեկտուալ ազատության և եռանդի համար, ովքեր մեծահոգաբար և կամավոր հիմունքներով աշխատեցին այս նախագծի համար: Հուսով ենք, որ այս աշխատությունը կծառայի որպես օգտակար աղբյուր ամրակայման-վերականգնման մշտապես զարգացող բնագավառում:

---

1. ECPL (European Conservation Practitioners License), այսուհետ՝ ԷՍՓԼ:

2. ÖRV (Österreichischer Restauratorenverband), այսուհետ՝ ԱՌՎ:

3. FFCR (Fédération Française des Conservateurs Restaurateurs), այսուհետ՝ ՖՖԿՌ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս գրքույկը ներկայացնում է ամրակայման-վերականգնման մասնագիտություն մուտք գործելու համար պահանջվող որակավորումների սահմանման համար Է.Կ.Կ.Օ.-ի կողմից կատարած աշխատանքը: Այն հիմնված է ամրակայման-վերականգնման գոյություն ունեցող սահմանումների (Է.Կ.Կ.Օ. 2009 թ.) և այն համոզմունքի վրա, որ ամրակայող-վերականգնողն ունի հանրային պատասխանատվություն՝ ի շահ ներկա և գալիք սերունդների, մշակութային սեփականության պահպանության և հարակից գիտելիքի տարածման գործում ներդրում կատարելու համար:

Վերջնական հաշվետվությունը վավերացվել է Գլխավոր ասամբլեայի կողմից 2010 թվականի հունիսին, Բրյուսելում: Այն համակցում է հայեցակարգային քարտեզագրման տեխնիկան Եվրոպական որակավորումների շրջանակի (ԵՈՇ) լեզվի հետ: Վերջինս իրականացվել է ամրակայման-վերականգնման մասնագիտություն մուտք գործելու համար որակավորման ոլորտները բնութագրելու և կոչման օրինական կիրառման համար: Այն արտահայտված է գիտելիքի և հմտությունների գնահատման ուղեցույցի միջոցով: Կարողությունը սահմանվում է որպես գիտելիքի և հմտության համադրություն փորձի հետ, որը թույլ է տալիս պրոֆեսիոնալ ամրակայող-վերականգնողին աշխատանքը կատարել հետևողականորեն և պատասխանատվությամբ: Է.Կ.Կ.Օ.-ն առաջարկում է, որ հենց այս համադրությունն է կիրառված ԵՈՇ 7-րդ մակարդակը ներկայացնող շրջանակում նկարագրված գործունեության առանձին ոլորտներում (մագիստրոսի աստիճանին համարժեք), որը սահմանում է ամրակայող-վերականգնող դառնալու համար պահանջվող մակարդակը: Այսպիսով ներկայացնում է անհատի՝ որպես պրոֆեսիոնալ զարգանալու սկզբնակետը:

Այս աշխատության ազդեցությունը

Է.Կ.Կ.Օ.-ի որդեգրած մոտեցման առավելությունն ամփոփված է իր արդյունքների լայն կիրառելիության մեջ: Անկախ մասնագիտացումից, ամրակայող-վերականգնողը կկարողանա իմանալ մասնագիտական որակավորման մակարդակն ու հիմնարար գիտելիքները յուրաքանչյուր ոլորտի համար: Այն մասնագիտական որակավորումների պահանջների՝ այնպես, ինչպես դրանք քարտեզագրված են Է.Կ.Կ.Օ.-ի կողմից և դրանց իրականության մեջ հնարավոր կիրառության, համեմատության հնարավորություն է տալիս: Համեմատությունները կարող են արվել անհատական հիմունքներով, կրթական ծրագրերի մատուցմամբ, կամ լինել ուղեցույց մասնագիտական կազմակերպությանն անդամակցության համար: Այնուամենայնիվ, ամրակայող-վերականգնողի գործողությունների քարտեզագրման և գնահատման իրական արժեքը հատուկ հմտության, գիտելիքի և փորձի իդենտիֆիկացումն է, որը լիազորում է այս անհատին կատարել գործողություն ուղղակիորեն մշակութային ժառանգության վրա:

Նախատեսված կիրառությունը

Այս փաստաթղթում ներկայացված աշխատության նկատմամբ հետաքրքրությունն արդեն արտահայտվել է շահագրգիռ կողմերի լայն շրջանակի զգալի մասի կողմից, այդ թվում՝ գործող ամրակայող-վերականգնողների, մասնագիտական մարմինների և կրթական հաստատությունների: Թեև այս աշխատությունը առնչվում է մշակութային ժառանգության ոլորտում գործող տարբեր անհատների և հաստատությունների հետ, այն առաջին հերթին նախատեսված է Է.Կ.Կ.Օ.-ի անդամ կազմակերպությունների համար: Հուսով ենք, որ սույն աշխատությունը կխթանի ակտիվ բանավեճ պահանջվող որակավորումների շուրջ՝ այս մշտապես զարգացող ոլորտ մուտք գործելու համար: Այդ պատճառով Է.Կ.Կ.Օ.-ի կոմիտեն առաջարկում է վերանայել այս աշխատությունը հինգ տարի հետո, որի ընթացքում իր անդամների և ընդհանուր ոլորտից եկող արձագանքները ողջունելի կլինեն:

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Է.Կ.Կ.Օ. կոմիտեն 2008 թ. մարտին կայացած Գլխավոր ասամբլեայի պատվիրակների կողմից լիազորվել էր առաջարկել «ամրակայող-վերականգնող»-ի կոչումը օգտագործելու իրավասություն ունեցող անհատի համար մեկնարկային մակարդակի կարողություններ ու որակավորում: Համաձայն Է.Կ.Կ.Օ./ԷՆԿՕՌԵ-ի ուղեցույցների (Է.Կ.Կ.Օ. 2004), այն համապատասխանում է Եվրոպական որակավորումների շրջանակի (ԵՈՇ) 7-րդ մակարդակում ներկայացված նկարագրիչին, որը հավասարվում է ակադեմիական մագիստրոսի աստիճանին: Աշխատանքը աջակցում է արհեստավարժ ամրակայող-վերականգնողի որակավորման տրամադրմանը ակադեմիական ընթացակարգով, բայց ընդունված է համարել, որ կան մասնագիտություն ձեռք բերելու այլ ուղիներ ևս, որոնք տրամադրում են հմտությունների, գիտելիքի և կոմպետենտության միևնույն մակարդակ:

Ի լրումն աշխատությունում ներկայացված հիմնական հատվածին՝ ամրակայման-վերականգնման մասնագիտության մեկնարկի համար առաջարկվող որակավորումների, բակալավրի աստիճանի և ասպիրանտական արհեստավարժության մակարդակները նույնպես առաջարկված են: Սա համալրում է ակադեմիական որակավորումների տիպիկ շարքը, որոնք հանդիպում են ամրակայման-վերականգնման բնագավառում և համարժեք են Եվրոպական որակավորումների շրջանակի 6-րդ և 8-րդ մակարդակներին: Դրանք ներկայացնում են կրթական ծրագրի միջանկյալ և ցկյանս ուսումնառության երկարաժամկետ նպատակները, որոնց մասնագետը պետք է հետամուտ լինի:

Աշխատանքային խումբը համաձայնեց հետևյալ սկզբունքներին՝ իր լիազորությունն իրականացնելով.

- Ամրակայման-վերականգնման աշխատանքը իրականացնելու համար պահանջվող արհեստավարժությունը ձևավորված է ընթացիկ մասնագիտական պրակտիկայից:

- Մուտքը մասնագիտություն սկսվում է 7-րդ մակարդակում, և ամրակայող-վերականգնողի կոչումը ամրագրված է այս մակարդակում կամ դրանից բարձր:

- Անհատներն աշխատում են ամրակայման-վերականգնման բնագավառում, բայց չունեն ամրակայող-վերականգնողի կոչումը օգտագործելու իրավունք: Ամրակայող-վերականգնողի որակավորումները սահմանելու գործում մշակութային ժառանգության բնագավառի այլ գործիչները կարող են ունենալ որոշ ընդհանուր որակավորումներ և ի վիճակի լինել իրենց համարելու այս մասնագիտության հետ կապ ունեցող անհատ, օրինակ՝ ամրակայման գիտնական և տեխնիկական արվեստի պատմաբան:

- Է.Կ.Կ.Օ.-ն ԷՆԿՕՌԵ-ին դիտարկում է՝ կրթություն տրամադրողների հետ, որպես ուսուցման արդյունքների համար պատասխանատու: Է.Կ.Կ.Օ.-ի դերն է՝ ձևակերպել մասնագիտական նկարագիրը և սահմանել մասնագիտական գործունեության մեկնարկի համար որակավորման ստանդարտը: Կոմպետենտությունը այս համա-տեքստում տվյալ անհատի մասնագիտացման բնագավառում աշխատանքի շարունա-կաբար բարձր ստանդարտին հասնելու և մատուցելու կարողությունն է:

- Է.Կ.Կ.Օ.-ն դիտարկում է ամրակայող-վերականգնողին որպես մշակութային ժառանգության ոլորտի մասնագետի, որն ընդգրկում է շատ տարբեր մասնակիցներ և շահառուներ: Յուրաքանչյուր մասնագիտական խումբ կունենա կոնկրետ դերեր մշակութային ժառանգության բնագավառում:

- Այստեղ ներկայացված աշխատությունը կառուցված է վերոնշյալ սկզբունքների վրա: Արդյունքները ներկայացված են այնպես, որ հնարավոր լինի օգտագործել որպես մասնագիտական գնահատման գործիք ինչպես անհատների, այնպես էլ կազմակերպությունների կողմից: 7-րդ մակարդակը սահմանված է մասնագիտություն մուտք գործելու տեսանկյունից և ուղեկցվում է ամրակայման-վերականգնման հատուկ նկարագրիչով՝ վավերացված Է.Կ.Կ.Օ. Գլխավոր ասամբլեայում՝ 2009թ. Սոֆիայում, 6-րդ և 8-րդ մակարդակների համար նկարագրիչները նույնպես առաջարկված են:

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Բոլոնյան համաձայնագիրը, որը պատճառ հանդիսացավ 1999 թ. հունիսին Եվրամիության անդամ երկրների կրթության նախարարների հանդիպման համար, սկիզբ դրեց ընդհանուր Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին (ԵՀԵԱ)[4]: Դրա հիմնական նպատակն է՝ բարելավել բարձրագույն կրթության արդյունավետությունն ու գործունությունը Եվրոպայում: Այն, ինչ այժմ անվանում են Բոլոնյան գործընթաց, միավորում է եվրոպական բարձրագույն կրթության կառուցվածքը և պահանջում է, որ յուրաքանչյուր կրթական ծրագիր նկարագրվի իր կողմից տրամադրող որակավորման և իր կազմակերպման տեսանկյունից: Նպատակն է ճշգրտել և թափանցիկ դարձնել որակավորման տարբեր մակարդակներն ու տեսակները, որոնք հասանելի են ողջ Եվրոպայում երրորդ մակարդակի բոլոր կրթական հաստատություններում մինչև 2012 թվականը:

Հետևաբար, Է.Կ.Կ.Օ.-ի պես եվրոպական կառույցների համար կարևոր է սահմանել իրենց անհատական մասնագիտությունների համար մեկնարկային պահանջները, որոնցից կարող են մշակվել որակավորման մակարդակներն ու տեսակները:

Մինչև 2012 թ. բոլոր կրթական ծրագրերը պետք է հստակեցնեն իրենց նպատակները ուսուցման արդյունքների տեսանկյունից: Սա արտացոլում է անցումը կրթության մատուցման և գնահատման մանկավարժակենտրոն մոտեցումից դեպի ուսանողակենտրոն, որն արտահայտում է ուսումնական դասընթացի ավարտին ուսանողից ակնկալվող արդյունքը, այն է՝ «իմանալ, հասկանալ և կարողանալ ներկայացնել ուսումնառության գործընթացի ավարտից հետո» (Եվրոպական հանձնաժողով 2009:13):

Ընդհանուր նկարագրիչները 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակների համար, ինչպես ձևակերպված է Եվրոպական հանձնաժողովի «Դեպի ցկյանս (հարատև) ուսումնառության Եվրոպական որակավորումների շրջանակ» փաստաթղթում, մեկնաբանված են մասնագիտական տեսանկյունից:

ԵՈՇ-ի ելակետային մակարդակներից յուրաքանչյուրը պահանջում է նկարագրություն այն մասին, թե ինչն է բնութագրիչ այդ մակարդակում դասակարգվող որակավորումների համար (SEC 2005:16): Դրանք հայտնի են որպես նկարագրիչներ և մեկնաբանվում են գիտելիքի, հմտությունների և ունակության միջոցով՝ ԵՈՇ-ի բոլոր ութ մակարդակներով:

---

4. EHEA (European Higher Education Area), այսուհետ՝ ԵՀԵԱ:

Այս գնահատման ուղեցույցը բնորոշվում է տվյալ մակարդակներում ընկալման կամ ուսուցման ծավալի տարբերակմամբ, հմտությունների և ունակությունների մակարդակով:

ԵՈՇ-ի առաջին հինգ մակարդակները համապատասխանում են դպրոցական կրթությանը, վերջին երեքը՝ ընդունված եռամյա (undergraduate) բակալավրի աստիճանի կրթական ծրագրին (6-րդ մակարդակ), երկամյա (postgraduate) մագիստրոսի աստիճանի ծրագրին (7-րդ մակարդակ) և եռամյա թեկնածուական/դոկտորական ծրագրին (8-րդ մակարդակ): Հետդոկտորական գործընթացը առայժմ ընդգրկված չէ այս մասշտաբում, և այն չունի ցկյանս ուսումնառության ճանաչման մեխանիզմ:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ/ ԱԿՐԵԴԻՏԱՑԻԱ

ԵՈՇ-ն ազգային մակարդակում մեկնաբանվում է համապատասխան Ազգային որակավորումներով զբաղվող մարմինների միջոցով, որտեղ 7-րդ և 8-րդ մակարդակների ճանաչումը կարող է միայն հաստատվել ակրեդիտացված ազգային կրթական հաստատությունների միջոցով: 7-րդ մակարդակը հաստատող մարմինը պետք է լինի համալսարան կամ բարձրագույն կրթության այլ պաշտոնական հաստատություն:

Ցկյանս ուսումնառության համար ԵՈՇ-ի ստեղծման երաշխավորագիրը պաշտոնապես ընդունվել է Եվրախորհրդի և Եվրապառլամենտի կողմից 2008 թ. ապրիլին: Այս երաշխավորագրի համաձայն, անդամ պետություններին խրախուսվում է ցկյանս ուսումնառության վավերականացման հանրահռչակումը: «Միայն անդամ պետությունների կողմից նման ոչ ֆորմալ կրթության վավերացումը ընդունելու դեպքում հնարավոր կլինի դրանց դասակարգումը ԵՈՇ-ի մակարդակներից մեկում»: Չնայած՝ «ամրակայող-վերականգնող» մասնագիտությունը ձեռք բերելու համար սահմանվում է Մագիստրոսի դիպլոմը (ԵՈՇ 7-րդ մակարդակ), այս մասնագիտության համար ոչ ֆորմալ կրթությունը պատմականորեն ճանաչվել է եվրոպական երկրների մեծ մասի կողմից: Է.Կ.Կ.Օ.-ն իր ուղեցույցները ձևակերպել է՝ հաշվի առնելով, որ «մասնագիտության ստանդարտները պահպանելու համար, ամրակայող-վերականգնողի պրոֆեսիոնալ կրթությունն ու վերապատրաստումը պետք է լինեն ամրակայման-վերականգնման ոլորտում համալսարանի մագիստրոսի աստիճանի մակարդակում (կամ ճանաչված համարժեքի մակարդակում)»:

Վերապատրաստման վերաբերյալ մանրամասները արտացոլված են Է.Կ.Կ.Օ.-ի «Մասնագիտական ուղեցույց III»-ում (Է.Կ.Կ.Օ. 2004): Մինչ օրս ԵՄ որոշ երկրներում այս համարժեքությունը միջնորդավորվում է առանձին մասնագիտական հաստատությունների ակրեդիտացման գործառույթով: Ակրեդիտացիան ճանաչված է որպես մասնագիտական գործունեության մեջ ստանդարտների ձևակերպման և չափման մասնագիտական ինքնակարգավորման համակարգ: Սակայն այնտեղ, որտեղ ակրեդիտացման համակարգերը գործածության մեջ են, դրանք չափված չեն ԵՈՇ-ի մակարդակների հետ: Սույն փաստաթուղթը ներկայացնում է սկզբնակետը, որից տվյալ աշխատանքը կարող է իրականացվել:

ՀՐԱՀԱՆԳ 36/2005/ԵՀ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ/ԵՈՇ

Այս փաստաթղթի նպատակների համար նշվում է, որ Հրահանգ 2005/36/ԵՀ (Եվրոպական պառլամենտ 2005 թ.) իրավաբանորեն պարտավորեցնող գործիք է և ունի գերակայություն ԵՈՇ-ի նկատմամբ: Այս Հրահանգը տարածվում է կանոնակարգված և չկանոնակարգված ազատ մասնագիտությունների վրա (liberal professions), այս նույն մասնագիտությունների փոխադարձ ճանաչմանը վերաբերող իր երաշխավորագրերում: Հրահանգի հոդված 12-ը առաջարկներ է ներկայացնում ցկյանս կրթության ճանաչման վերաբերյալ, երբ անդամ պետությունն ընդունում է իր վավերացումը:

Հրահանգն օգտագործում է հինգ մակարդակներ որակավորումները դասակարգելու համար՝ ի հակադրություն ԵՈՇ-ի, որն ունի ութ մակարդակ: Հրահանգի հնգաստիճան կառուցվածքը տարբեր մակարդակների միջև, որոնց վրա տարածվում են որակավորումները, ավելի լայն շրջանակ ստեղծելու ազդեցություն է ունենում: Այն, հետևաբար, նույնքան ճշգրիտ գործիք չէ որակավորումները աստիճանավորելու առումով, որքան՝ ԵՈՇ-ը: Դրա նպատակն է՝ ներգաղթող մասնագետին հնարավորություն տալ իր մասնագիտության շրջանակում ավելի հեշտ անցում կատարելու եվրոպական սահմաններում՝ ուղղորդելով, որ որակավորման այս համարժեքությունները/համեմատությունները համապատասխանեն ավելի լայն կատեգորիաների: Հրահանգը անդրադառնում է մասնագիտական փոխհատուցման միջոցառումներին, որոնք թույլատրելի են հյուրընկալող երկրում, և հաշվի է առնում մասնագիտական մարմինների կանոնակարգող ազդեցությունը:

ԴԵՊԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ-ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԱԳԻՐԸ

Է.Կ.Կ.Օ.-ն ԻԿՌՕՄ-ի աջակցությամբ նախապատրաստել է Եվրոպայում Մշակութային ժառանգության ամրակայման-վերականգնման վերաբերյալ երաշխավորագրի նախագիծ: Աշխատանքը կատարվել է ԷՆԿՕՌԵ-ի մասնակցությամբ և ներառում է հավելյալ գլուխ, որը սահմանում է ամրակայման-վերականգնման մեջ օգտագործվող տերմինները:

Այս նախագիծը ներկայացվում է Եվրոպայի խորհրդի կողմից մշակված նորմատիվ սանդղակի շրջանակներում՝ մշակութային ժառանգության ամրակայման և վերականգնման առնչությամբ (Է.Կ.Կ.Օ. 2009:6): Այն կարող է ստեղծել հիմք, որը «կարող է հանրահռչակել դինամիկ գործընթացը Եվրոպայում մշակութային ժառանգության ճանաչումն ու պահպանությունը ուղղորդող [ամրակայման-վերականգնման] սկզբունքների իրականացման համար» (Է.Կ.Կ.Օ. 2009:7): Նախագծի տեքստը հղումներ է կատարում Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված այլ բանաձևերի և կոնվենցիաների, ինչպես օրինակ՝ 1985 թվականին ընդունված (ԵԽ 1985 թ.) «Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիան», 1992 թվականին ընդունված (ԵԽ 1992 թ.) «Հնագիտական ժառանգության պահպանության մասին եվրոպական կոնվենցիան» (խմբագրված) և 2005 թվականին ընդունված (ԵԽ 2005 թ.) «Մշակութային ժառանգության արժեքի մասին շրջանակային կոնվենցիան»:

Այս տեքստը մանրամասնում է մշակութային ժառանգության պաշտպանության գործում ամրակայման և վերականգնման բնույթը և ներկայացնում է ամրակայումն ու վերականգնումը «որպես ապագա սերունդներին (մշակութային ժառանգության) փոխանցումը ապահովելու էական գործոններից մեկը» (Է.Կ.Կ.Օ. 2009:9): Փաստաթուղթը շեշտում է, որ «մշակութային ժառանգության բարձրորակ միջամտությունները կարող են երաշխավորված լինել միայն մասնագիտական որակավորման համակարգերի՝ այդ թվում՝ շարունակական մասնագիտական զարգացման միջոցով՝ հիմք հանդիսանալով ամրակայման-վերականգնման համար պատասխանատու մարդկանց, ընկերությունների և կազմակերպությունների ճանաչման համար» (Է.Կ.Կ.Օ. 2009:9): Է.Կ.Կ.Օ.-ն համարեց սա ուղղորդող սկզբունք մասնագիտության ԵՈՇ-ի նկարագրիչները սահմանելու և կարողությունները ձևակերպելու մեջ իր ներգրավվածության համար: Մեկնաբանելով ԵՈՇ-ում տրված ընդհանուր նկարագրիչները՝ Է.Կ.Կ.Օ.-ն ձգտում է երաշխավորել, որ մասնագիտություն մուտք գործելու ու դրանով զբաղվելու պայմանները աստիճանավորվում են ճիշտ մակարդակի վրա:

ԱՄՐԱԿԱՅՄԱՆ-ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐԸ 7-ՐԴ ՄԱԿԱՐԴԱԿԻ (ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԱՍՏԻՃԱՆ) ՀԱՄԱՐ

Ինչպես վերը նշվեց, 2007 թ. Է.Կ.Կ.Օ.-ի Գլխավոր ասամբլեայի ժամանակ փակ քվեարկությամբ ընդունվեց, որ մասնագիտություն մուտք գործելու սկզբնակետը, ինչպես սահմանվել է այս կազմակերպության Մասնագիտական ուղեցույցով (Է.Կ.Կ.Օ. 2004), համապատասխանում է ԵՈՇ-ի 7-րդ մակարդակին: Աշխատանքային խմբի առաջին մարտահրավերը ԵՈՇ-ի երեք ընդհանուր նկարագրիչների դիտարկումն էր այս մակարդակում և ապա՝ դրանց մեկնաբանումը մասնագիտություն մուտք գործելու տեսանկյունից: Անմիջական արդյունքը պետք է նկարագրիչի ընդհանուր լեզվով ձևակերպեր գիտելիքը, հմտությունները և ունակությունները տվյալ մակարդակում: Ինչը, սակայն, ապացուցվեց, որ դժվար է:

Կրթության և մասնագիտություն մուտք գործելու համար նկարագրիչներ սահմանելու անմիջական մոտեցման պոտենցիալ խնդիրը միանգամից դարձավ ակնհայտ: Մեկ դրույթը չափազանց ընդհանուր կլիներ իմաստալից լինելու համար և կենթարկվեր միանգամից և՛ հրահանգչական, և՛ ի սկզբանե հնացած դառնալու ռիսկին: Ավելին, կա գիտելիքի, հմտությունների և ունակությունների պարզ դրույթների մեկնարկային մակարդակի չափազանց կարծրացման հստակ վտանգ, այդպիսով գուցե դառնալով խոչընդոտ նոր գիտելիքի ստեղծման համար, ինչն իր հերթին խանգարելու է մասնագիտական զարգացմանը:

Այս մտահոգությունները հանգեցրին և՛ ԵՈՇ-ի, և՛ ամրակայող-վերականգնողի մասնագիտական դերի առավել հիմնարար ուսումնասիրմանը: Այն առաջնային պլան բերեց ԵՈՇ-ի հիերարխիկ կառուցվածքը, մասնավորապես՝ ուսուցման ընթացքին զուգահեռ ավելացած գիտելիքը, հմտություններն ու ունակությունները, որը ներկայացնում է ուսուցման գործընթացը որպես առաջխաղացում մակարդակներով: Այս գործընթացի քննությունը, հաստատված ընդհանուր նկարագրիչների աճող բարդությամբ, թույլ տվեց ընդարձակվող գիտելիքի, հմտությունների և կոմպետենտության հարացույցի բացահայտումը, այնպես, ինչպես այն փոխկապակցված է դիտարկվող մասնագիտության մեկնարկային դրույթների հետ: Արդյունքում, անհատի կողմից պահանջվող գիտելիքի, հմտությունների և կարողությունների ոլորտը և սահմանները բացարձակ իմաստով, մի շարք հանգամանքների բերումով, սահմանված չեն այս շրջանակում: Փոխարենը՝ անհատի կողմից տվյալ մասնագիտությունը ձեռք բերելու համար համապատասխանությունը ենթադրում է բավարար մակարդակի գիտելիքի, հմտությունների և կոմպետենտության տիրապետում, որոնք անհրաժեշտ են վերականգնող-ամրակայողի պարտավորությունները ստանձնելու համար՝ որոշակի մասնագիտացման կամ գիտակարգի, ինչպես նաև մասնագիտական վարքագծի կանոնների շրջանակներում:

2009 թ. փետրվարի 20-ին կայացած հանդիպման ընթացքում Է.Կ.Կ.Օ.-ի և ԷՆԿՕՌԵ-ի պատվիրակների միջև քննարկվեց ամրակայման-վերականգնման մասնագիտության համար ԵՈՇ-ի 7-րդ մակարդակի ընդհանուր նկարագրիչի հնարավոր մեկնաբանումը: Այն պաշտոնականացրեց երկու կազմակերպությունների մոտեցումը, համաձայն որի Է.Կ.Կ.Օ.-ի լիազորությունն է՝ անդրադառնալ նկարագրիչին մասնագիտություն մուտք գործելու տեսանկյունից, մինչդեռ ԷՆԿՕՌԵ-ի լիազորությունն է՝ ապահովել անհրաժեշտ կրթության պահանջները: Սույն փաստաթղթի նպատակից ելնելով՝ յուրաքանչյուր ընդհանուր նկարագրիչ կատեգորիան մեջբերված է 7-րդ մակարդակի համար, դրան հաջորդում է Է.Կ.Կ.Օ.-ի և ԷՆԿՕՌԵ-ի համատեղ մեկնաբանությունը:

7-րդ մակարդակում ԵՈՇ-ը պահանջում է.

Գիտելիք. բարձր մասնագիտական գիտելիքներ, որոնց մի մասը առանցքային նշանակություն ունի աշխատանքի կամ ուսումնասիրության ոլորտներում՝ որպես ինքնատիպ մտածողության և/կամ հետազոտության հիմք: Մի ոլորտում և տարբեր ոլորտների հատման կետում գիտելիքի խնդիրների վերաբերյալ քննադատական ընկալում: (Եվրոպական համայնքներ, 2008:12)

Եվ Է.Կ.Կ.Օ.-ն, և ԷՆԿՕՌԵ-ն մեկնաբանում են *բարձր մասնագիտացված գիտելիքը* որպես գիտելիք ամրակայման-վերականգնման ոլորտում, որը ստացվում է միայն այն կրթությանը հետևելով, որը «ինտեգրված տեսական և գործնական դասավանդման պատշաճ հավասարակշռությունն է...» (ԷՆԿՕՌԵ 1997, հոդված 6): Մենք մեկնաբանում ենք *ոլորտում գիտելիքի խնդիրների քննադատական ընկալումը* որպես գիտելիք յուրացնելու, դրա իսկությունն ու հավաստիությունը գնահատելու և այն կիրառելու ունակություն ամրակայող-վերականգնողի մասնագիտացման ոլորտին վերաբերող բոլոր որոշումները հիմնավորելու և, անհրաժեշտության դեպքում, տվյալ որոշումներից բխող գործողությունները կատարելու կամ կառավարելու համար: Այն արտահայտվում է տվյալ անհատի մասնագիտացման մեջ/ոլորտում ամրակայման-վերականգնման սկզբունքների, տեսությունների և պրակտիկաների *բարձր մասնագիտացված գիտելիքով, առաջատար գիտելիքը* արտահայտվում է տվյալ անհատի մասնագիտացման համար օժանդակ համարվող ոլորտների շրջանակով և, ընդհանուր առմամբ, մշակութային ժառանգության բնագավառին վերաբերող *համապարփակ գիտելիքով:*

Հմտություններ. հետազոտության և/կամ նորարարության համար պահանջվող մասնագիտացված խնդիրների լուծման հմտություններ՝ նոր գիտելիքի և ընթացակարգերի մշակման և տարբեր ոլորտներից գիտելիքը ինտեգրելու համար (Եվրոպական համայնքներ, 2008:13):

Եվ Է.Կ.Կ.Օ.-ն, և ԷՆԿՕՌԵ-ն մեկնաբանում են մասնագիտացված խնդիրներ լուծելու հմտությունները որպես բարձր մասնագիտացված գիտելիքի վրա հիմնված և էթիկայով ղեկավարվող ամրակայմամբ-վերականգնմամբ զբաղվելու ունակության մակարդակ: Սա պահանջվում է մասնագիտության սահմաններում նոր գիտելիք և ընթացակարգեր գտնելու, հարմարեցնելու կամ ստեղծելու համար:

Այն ներառում է անհրաժեշտ տեղեկատվությունը դիտարկելու, հավաքելու և քննադատորեն վերլուծելու կարողություն՝ համապատասխան եզրակացություններ անելու և մի շարք գործողություններ ձեռնարկելու համար, իրավիճակն ու գործընթացը շարունակաբար վերլուծելու և գնահատելու ունակություն՝ համապատասխան կետում կիրառելու համար, ըստ անհրաժեշտության, տարբեր ոլորտներից գիտելիք ինտեգրելու և նոր գիտելիք ու ընթացակարգեր ստեղծելու կարողություն, գիտելիքով կիսվելու ունակություն:

Ձեռքերի ճկունության և զգայունության արհեստավարժ մակարդակ պետք է ցուցադրվի մասնագիտացման ոլորտում, որը կարող է նաև փոխանցվող կամ համընդհանուր լինել համապատասխան ոլորտներում տարբեր մասնագիտացումների միջև: Այն համարժեք է տվյալ մասնագիտացման շրջանակում ծանոթ գործընթացներ իրականացնելու ընկալման ունակությանը, որը թույլ է տալիս ձեռնարկել անծանոթ գործընթացներ: Այն ներառում է տվյալ մասնագիտացման շրջանակում մեթոդների, նյութերի, մեխանիզմների և գործիքների բարձր մակարդակի իմացություն և նոր մեխանիզմներ ու մեթոդներ հարմարեցնելու ու զարգացնելու կարողություն:

Մասնագիտական կարողություն. կառավարել և վերափոխել աշխատանքային կամ ուսումնասիրման համատեքստերը, որոնք բարդ են, անկանխատեսելի և պահանջում են նոր ռազմավարական մոտեցումներ: Պատասխանատվության կրում մասնագիտական գիտելիքի և փորձի մեջ ներդրում ունենալու և/կամ թիմերի ռազմավարական կատարողականությունը վերանայելու համար: (Եվրոպական համայնքներ, 2008:13)

Եվ Է.Կ.Կ.Օ.-ն, և ԷՆԿՕՌԵ-ն ամրակայող-վերականգնողին համարում են կոմ-պետենտ, երբ նա ստացել է անհրաժեշտ հմտություններ, գիտելիք և փորձ իր մասնագիտական ոլորտում գործելու համար՝ մասնագիտական վարքագծի կանոնների և գործնական սահմանների համաձայն: Սա արտահայտում է մեկ ամբողջական ոլորտում հետևողականորեն և պատասխանատվությամբ, համապատասխան զգուշավորությամբ աշխատելու կարողությունը և ներառում է գիտելիքների ու հմտությունների կիրառումը, ինչպես ներկայացված էր ավելի վաղ: Այն ներառում է գոյություն ունեցող ամրակայման-վերականգնման հայեցակարգերը օգտագործելու կարողությունը, նոր ռազմավարական մոտեցումներ ստեղծելու և դրանց սկզբունքներն ու էթիկան զանազան իրավիճակներում կիրառելու ունակությունը:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊՐՈՖԻԼԱՎՈՐՈՒՄ

Այս բաժինը համակարգված կերպով զարգացնում է ամրակայման-վերականգնման մասնագիտությունը յուրացնող անհատից պահանջվող գիտելիքի, հմտությունների և կոմպետենտության մակարդակի նկարագրությունը: Այն ներկայացնում է ամրակայող-վերականգնողի կոչումը օրինականորեն կիրառելու ելակետը: Սա նաև ներկայացնում է սովորաբար, բայց ոչ բացառապես, ակադեմիական մագիստրոսի աստիճանի համար ուսուցման ավարտը և մասնագիտական կարիերայի սկիզբը: Թեև Է.Կ.Կ.Օ.-ն ընդունում է, որ մագիստրոսական մակարդակում ճանաչված կրթական ծրագիրն ավարտած մարդիկ կարող են ցանկանալ և որակավորված լինել ստանձնելու համար այլ դերեր մշակութային ժառանգության ոլորտում, օրինակ՝ հավաքածուների կառավարում, այդուհանդերձ, սույն փաստաթուղթը վերաբերում է մասնավորապես ամրակայման-վերականգնման մասնագետին:

Մեր աշխատանքի բնույթը սահմանող գործողությունների պրոֆիլավորման միջոցով առաջարկվում է հայեցակարգային քարտեզ: Այն դիտարկում է ամրակայում-վերականգնումը որոշում կայացնելու գործընթացի համատեքստում, որը ձգտում է «ապահովել առավելագույն իմաստի փոխանցումը անցյալից դեպի ապագա՝ ի շահ ամենուրեք բոլոր մարդկանց» և «ընդգրկում է փոփոխությունների կառավարումը [...] բանակցությունների միջոցով» (Սթենիֆորթ 2002 թ.) մշակութային ժառանգության բնագավառի շահառուների և այլ մասնագետների հետ: Այն հաստատապես սահմանում է ամրակայում-վերականգնումը որպես մշակութային ժառանգության կառավարման անբաժանելի մաս, որը հիմք է հանդիսանում նրա պահպանության համար: Պահանջվող որակավորումները, հետևապես, ներկայացված են այս համատեքստում, և շրջանակը մշակված է այս իրավիճակը արտացոլելու համար: Այն բացահայտ կերպով ընդունում է հետազոտության և փաստաթղթավորման անհրաժեշտությունը որոշման կայացման գործընթացի յուրաքանչյուր փուլում (տե՛ս նաև Է.Կ.Կ.Օ. 2001 թ.), որոնք պրոֆեսիոնալ ամրակայման-վերականգնման ուղղորդող սկզբունքներից են և ակադեմիական կարգավիճակ են հաղորդում նրան: Ձեռքերի ճկունությունը, ախտորոշման տեխնիկաների գործնական կիրառման և ամրակայման ու վերականգնման միջամտությունների մեջ՝ որպես մասնագիտական պրակտիկայի անհրաժեշտ պայման, չափվում է հմտությամբ: Ամրակայող-վերականգնողի գրեթե յուրաքանչյուր գործողություն պարունակում է հմտության տարր:

Է.Կ.Կ.Օ.-ի կողմից առաջարկվել է գույնով կոդավորված հմտության սանդղակ, որն օգտագործվել է բոլոր գործողությունները՝ իր ողջ շրջանակով, գնահատելու համար:

Շրջանակը նկարագրում է ամրակայման-վերականգնման գործընթացը այնպես, ինչպես այն զարգանում է հետազննության և ախտորոշման միջոցով՝ բերելով ուղղակի միջամտության կամ, անհրաժեշտության դեպքում, կանխարգելիչ միջոցառման, որից հետո դիտարկվում են հետմիջամտության գործընթացները: Դրանք ներկայացված են գծապատկերով՝ որպես վերլուծական պրոգրեսիան ներկայացնող կենտրոնական ողնաշար, որը հետևում է ընդունված էթիկական սկզբունքներին և որից բխում են տարաբնույթ գործողություններ:

Համարվում է, որ յուրաքանչյուր փուլ պետք է ղեկավարվի մասնագիտական էթիկայով և վավերագրելու հրամայականով, որը կարող է ուղղորդել դեպի նոր գիտելիքի տարածումը, ինչը, ինչպես և գործողությունները որպես այդպիսին, ևս գնահատվում է: Ենթագործողությունները կարող են ավելացվել ողնաշարաձև քայլերին, ներկայացված ստորև ցուցադրված, ընդլայնված հայեցակարգային մոդելում (տե՛ս պատկեր 2):

Ամրակայման-վերականգնման գործընթացը (նշված կապույտով) պահանջում է հետևյալ քայլերը (նշված կարմիրով).

- Գործընթացի մեկնարկը բնորոշող առաջին քայլը ներառում է զննությունն ու ախտորոշումը: Այն ընդգրկում է առարկայի բնույթի գնահատումը, փոփոխության պատճառները և ռիսկերը, որոնց մշակութային ժառանգությունը բախվում է ներկայիս իրավիճակում:
- Սա ուղղորդում է դեպի կարիքների գնահատում պահանջող երկրորդ քայլը, որը ներառում է ներկա և ապագա կիրառությունը:
- Երրորդ քայլն ընդգրկում է ամրակայման-վերականգնման գործողությունների ընտրությունը և գործողությունների/բուժման պլանավորումն ու կազմակերպումը: Այն ներառում է, օրինակ՝ ցանկալի արդյունքների, պահանջվող միջամտության մակարդակի, այլընտրանքների գնահատման, միջոցառումների սահմանափակումների, շահառուների պահանջների, ապագա կիրառության ռիսկերի և տարբերակների դիտարկումը:
- Այս ամենը պահանջում է պլանավորում և կազմակերպում, այդ թվում՝ առողջության և անվտանգության, իրավական դաշտի, ապահովագրության, նախագծի կառավարման, ֆինանսների և սարքավորումների ու կենցաղային պայմանների դիտարկում:
- Հինգերորդ և կարևորագույն քայլն ընտրված գործողության ընթացքը կամ բուժումը իրականացնելն է: Այս քայլը ներառում է կանխարգելիչ միջոցառումները, վերականգնողական միջոցառումները, վերականգնման գործընթացները և կառավարման գործընթացները:
- Դրա արդյունքը ամրակայման-վերականգնման արդյունքն է: Այն ներառում է ռիսկի աստիճանի փոփոխության գնահատումը, բուժման կամ գործողության հաջողությունը և արդյունքների վերաբերյալ հաղորդակցությունը: Այն նաև ներառում է մշակութային ժառանգության պահպանության համար պահանջվող ապագա գործողությունների նույնականացումը:
- Յոթերորդ քայլը հետխնամքի վերաբերյալ խորհրդատվությունն է, որը հիմնված է հետագա գործողությունների վրա, որոնք որոշվել են նախորդ փուլում: Այն կարող է ներառել ապագա աշխատանքների ժամանակացույցը և խնամքի ու պահպանության ուղեցույցը:



Պատկեր 1. Ողնաշարաձև քայլեր


Ամրակայման-վերականգնման գործընթաց
պահանջում է
Հետազննություն և ախտորոշում
գնահատմամբ
ոչ նյութական ասպեկտներ
Նյութ և տեխնիկա
փոփոխության պատճառներ
առկա ռիսկ
ուղղորդում է դեպի
վավերագրում
Կարիքների գնահատում
պահանջում է գնահատում
ներկա կիրառություն
նախատեսվող հետագա կիրառություն
թույլ է տալիս
պահանջելով
Ա-Վ գործողությունների գնահատում
որը պահանջում է
հետազոտություն
Գործողությունների պլանավորում և կազմակերպում
որը գիտարկում է
առողջություն և անվտանգություն
օրենսդրություն
ապահովագրություն
նախագծի ժամանակացույց
ֆինանսներ
սարքավորումներ և հարմարություններ
որպեսզի կատարի/իրականացնի
ուղղորդելով դեպի
Ա-Վ գործողություններ
պահանջելով
մշտադիտարկում
հասնելու համար
բարելավելու համար
կարող է ուղղորդել դեպի
հարմարեցում
նոր գիտելիք
կարող է ուղղորդել դեպի
Արդյունք
որից հետո
ռիսկի փոփոխության գնահատում
արդյունքի հաջողության գնահատում
արդյունքի տարածում
որոշել հետագա գործողությունները
տարածում
որին հաջորդում է
Հետխորհրդատվություն
որը ներառում է
բանավոր ներկայացում
որը տրամադրում է
հիրատարակություն
որը կարող է դառնալ մասը
ուղեցույց
հետագա աշխատանքի ժամանակացույց



Պատկեր 2. Ընդլայնված հայեցակարգային մոդել

Գիտելիքի, հմտության և ունակության գնահատում

Այս բաժինը դիտարկում է գիտելիքների, հմտությունների և ունակությունների գնահատման ուղեցույցը՝ որպես ուսուցման հիերարխիա: ԵՈՇ համակարգը առանձին նկարագրիչներ է տալիս ուսուցման այս երեք ասպեկտների համար: Մանրամասն վերլուծությունից հետո Է.Կ.Կ.Օ.-ն որոշեց կենտրոնանալ գիտելիքի և հմտության վրա, որովհետև դրանք կարող են գնահատվել անկախ կերպով: Մինչդեռ կարողությունը մեկնաբանվում է որպես գիտելիքի և հմտության խառնուրդ փորձի հետ միասին, որը թույլ է տալիս մասնագետ ամրակայող-վերականգնողին կատարել աշխատանքը հետևողականորեն և պատասխանատվությամբ: Գիտելիքի և հմտությունների համար օգտագործված սանդղակները նկարագրված են ստորև:

Գիտելիքների գնահատում

Ամրակայող-վերականգնողի գործողությունները նույնականացնելուց հետո յուրաքանչյուրին պետք է գնահատել կամ մեկնաբանել գիտելիքի բովանդակության տեսանկյունից, այսինքն՝ գիտելիքի քանակի և տեսակի, որն աշխատանքային խումբը հասկանում է որպես մասնագիտական պահանջների անբաժանելի մաս:

Անդերսոնի և Կրաթուաոհլիի կողմից (2001 թ.) մշակված Կարգաբանությունը՝ հիմնված Բենջամին Բլումի բնօրինակ աշխատանքի վրա (1956 թ.), օգտագործվել է այս նպատակով: Այն պարունակում է գիտելիքի (իմացական գործընթացներ) հետևյալ սանդղակը.

1. ***Հիշել՝*** իմանալ ինչ-որ բանի գոյության մասին և թե որտեղ այն գտնել:
2. ***Հասկանալ՝*** կարողանալ հասկանալ ինչ-որ բան համատեքստում և զուգորդություններ կատարել տարբեր բաների միջև:
3. ***Կիրառել՝*** կարողանալ օգտագործել գիտելիքը համապատասխան համատեքստում կանխատեսելի ձևով՝ ցանկալի արդյունքին հասնելու համար:
4. ***Վերլուծել՝*** կարողանալ գիտելիքը կիրառել քննադատորեն՝ օգտագործելով ընկալման մակարդակը, որը թույլ է տալիս տվյալ մեկին բացատրել արդյունքները, այսինքն՝ վերակառուցել, թե ինչպես է ստացվել արդյունքը: Որոշման կայացումը ծագում է վերլուծությունից, որին, թեև գալիս է վերլուծական մոտեցման կիրառումից, պակասում է փորձը:

5. ***Գնահատել՝*** կիրառել գիտելիքը իրավիճակը չափելու համար իր ընդարձակ համատեքստում և ապագա արդյունքները սահմանելու փոխհարաբերությամբ: Այն թույլ է տալիս արդյունքները հավասարակշռել որոշում կայացնելու և ավելի լայն կառավարչական հմտությունների համատեքստում:

6. Ստեղծել՝ ընդարձակ գիտելիք և փորձ, որը թույլ է տալիս տվյալ մեկին ընդլայնել գիտելիքի սահմանները: Սա պահանջում է բարձր զարգացվածությամբ հեռատեսություն և մետակոգնիտիվ ընկալում:

Գիտելիքի տեսակը դասակարգվում է հետևյալ կերպ.

A. Փաստացի՝ գիտելիքի մասին կամ դրան առնչվող տեղեկություն՝ ներկայացված որպես օբյեկտիվ իրականություն,

B. Հայեցակարգային՝ կոնկրետ օրինակներից ընդհանրացված գիտելիք, վերացական կամ ընդհանուր գաղափարի մասին կամ դրան առնչվող կամ էլ այն պարունակող,

C. Ընթացակարգային՝ որևէ բան կոնկրետ ձևով իրականացնելու կամ գործելու մասին կամ դրան առնչվող գիտելիք,

D. Մետակոգնիտիվ՝ գիտակից մտավոր գործողությունը գերազանցող (ավելի համապարփակ, քան) գիտելիք՝ սովորաբար ցուցադրված փորձառու պրակտիկ աշխատող մասնագետի կողմից:

Յուրաքանչյուր մակարդակ նախորդից ուղղակիորեն բխող վարքագծից սովորելու հմտությունների զարգացումն է: Օգտագործելով վերոնշված դասակարգման համակարգերը՝ յուրաքանչյուր գործողության բջջին, ցուցադրված պատկեր 2-ում, տրվել է կոորդինատների շարք՝ կապված պահանջվող գիտելիքի մակարդակի և տեսակի հետ: Գիտելիքի ծավալը և կատեգորիան կիրառելու գործում ակնհայտ դարձավ, որ 7-րդ մակարդակը պետք է սահմանված լինի 6-րդ և 8-րդ մակարդակների հետ հարաբերակցությամբ, ոչ միայն ֆորմալ ակադեմիական կրթության ծավալի շրջանակում, այլև որակավորման ճանաչման, որը կարող է ձեռք բերվել աշխատանքին և շարունակական մասնագիտական զարգացմանը (CPD)[5] հաջորդող տարիներին:

Հմտության գնահատում

Յուրաքանչյուր գործողության կատարման համար պահանջվող հմտության մակարդակը գնահատվել է նույն կերպ: Հմտությունը, ընդհանուր առմամբ, սահմանված է հետևյալ կերպ՝ վարպետություն, շնորհք կամ ճկունություն, որը ձեռք է բերվել կամ զարգացել վերապատրաստման կամ փորձի միջոցով: Այն ենթադրում է հատուկ կարողություն կամ պատրաստվածություն, որը թույլ կտա տվյալ մեկին կատարել գործողությունը հեշտությամբ և ճշգրտությամբ ցանկալի արդյունքին հասնելու համար:

5. CPD-ն (Continuous Professional Development) մասնագիտական հմտությունների զարգացման, պահպանման և փաստագրման շարունակական գործընթացն է:

1. Հիմնական հմտությունը այն է, երբ անհատն ունակ է համալիր ամրակայման-վերականգնման գործընթացում կատարելու միայն հիմնական առաջադրանքները: Նա, ամենայն հավանականությամբ, չի ունենա խոր գիտելիք որևէ առարկայի վերաբերյալ պահանջվող առաջադրանքը առանց ղեկավարի իրականացնելու համար և հնարավոր է՝ չտիրապետի մի շարք կիրառվող էթիկայի կանոններին: Նա լավ գործում է մասնագիտության կողմից սահմանված շրջանակներում:

2. Միջանկյալ հմտությունը այն է, երբ անհատը տիրապետում է բարձր մակարդակի հմտության և՛ ընդարձակության, և՛ խորության տեսանկյունից: Ակնկալվում է, որ նա տիրապետում է ոլորտի ողջ գիտելիքների հիմնական հմտություններին, ունակ է ներդնելու տարբեր գաղափարներ այդ ոլորտում և տիրապետելու կանոններին: Նա ունակ է կատարելու ամրակայման-վերականգնման հիմնական առաջադրանքները առանց ղեկավարության և թիմով է աշխատում բարդ խնդիրների շուրջ:

3. Արհեստավարժ հմտությունը այն է, երբ ակնկալվում է, որ անհատն ունի ամրակայման-վերականգնման գործընթացները ինքնուրույն կատարելու համապատասխան կարողություն և հասկանում է կանոնների ուղղվածությունը, որոնք կառավարում են ոլորտը: Նա ունակ է իրականացնելու առաջադրանքներ և գործընթացներ մի մակարդակում, որն ընդունելի է մասնագիտության շրջանակում, բայց ունակ չէ աշխատելու նույնքան արդյունավետ, որքան փորձառու ամրակայող-վերականգնողը, և կարող է չտիրապետել համապատասխան հմտությանը ամենադժվար առաջադրանքների կատարման համար:

4. Փորձագետի հմտությունը այն է, երբ անհատը տիրապետում է առաջադրանքներ կատարելու համապարփակ կարողությանը և հանձն է առնում գործընթացներ իր ոլորտի կամ պատրաստվածության շրջանակում: Նա ի վիճակի է կատարելու առաջադրանքներ և լավ հասկանալու օժանդակ ոլորտներում կատարվող գործընթացները: Նա ունակ է կիրառելու գիտելիքը և գործընթացների ընկալումը նոր և նորարարական ձևով և կկարողանա հարմարեցնել ու ստեղծել նոր մեթոդներ ամրակայման-վերականգնման ոլորտում:

Յուրաքանչյուր մակարդակ ռազմավարական քարտեզի վրա կոդավորվել է գույնով:

Սկսած ԵՈՇ-ի 7-րդ մակարդակից, որը ելակետային մակարդակ է ամրակայման-վերականգնման մասնագիտության համար, գիտելիքի մակարդակը և տեսակը հմտության մակարդակի հետ միասին որոշվել է ենթագործողության բջիջներից յուրաքանչյուրի համար: Ստացված քարտեզը ներկայացված է ստորև:

ԵՈՇ 7-րդ ՄԱԿԱՐԴԱԿ

Այս քարտեզը (պատկեր 3) ցույց է տալիս, որ տվյալ մակարդակում գիտելիքի տեսակը հիմնականում հայեցակարգային (B) և ընթացակարգային (C) է, և գիտելիքի այս մակարդակը թույլ է տալիս աշխատողին օգտագործել իր գիտելիքը (3) և վերլուծել արդյունքները (4): ԵՈՇ 7-րդ մակարդակը, հետևաբար, մեկնաբանվում է որպես աշխատանք ամրակայման-վերականգնման մի շարք գործընթացների հետ, որոնք կայացած են և ծանոթ, նա դեռ սկսում է քննել գործընթացները որպես այդպիսին: Նա, ով մուտք է գործում մասնագիտություն, հազվադեպ է «ստեղծում» ամրակայման-վերականգնման խնդիրների հաղթահարման նոր ձևեր: Աշխատողը դեռ գիտակ չէ իր բնագավառում, քանի որ իր աշխատանքը դեռ պետք է դառնա մետակոգնիտիվ: Թեև նա բավարար տիրապետում է քննադատական ընկալմանը գործընթացը փոխելու և հարմարեցնելու համար, նա, հավանաբար, կարող է միայն վերլուծել արդյունքները առանց գնահատելու գործընթացը որպես այդպիսին:

Սույն մասնագիտությունը ստացողը ունի ԵՈՇ 7-րդ մակարդակի որակավորում, տիրապետում է մի շարք հմտությունների միջանկյալի և պրոֆեսիոնալ/կոգնիտիվի միջև, հմտության մեծագույն մակարդակը այնտեղ է, որտեղ ամրակայող-վերականգնողն ուղղակիորեն շփվում է մշակութային ժառանգության հետ: Գունային կոդավորումը քարտեզի վրա շատ պարզ արտահայտում է պատկերը. դեղինի ավելի խիտ հատվածները ուղղակիորեն համապատասխանում են մշակութային ժառանգության վերլուծությանն ու բուժմանը:

Ամրակայման-վերականգնման աշխատանքի հետ կապված կազմակերպումն ու պլանավորումը պահանջում են մասնագիտական լավագույն փորձառության համար միջին մակարդակի հմտություն, մինչդեռ առողջության և անվտանգության, իրավաբանական խնդիրների, ապահովագրության և ֆինանսների մեջ հիմնական մակարդակի հմտությունը բավարար է: Ընդունված է համարել, որ կառավարման հմտությունները սերտորեն չեն առնչվում այս ոլորտի հետ, բայց հիմնական հմտություններ պահանջվում են:


Ամրակայման-վերականգնման գործընթաց
պահանջում է
Հետազննություն և ախտորոշում
գնահատմամբ
ոչ նյութական ասպեկտներ(a/b4)
նյութ և տեխնիկա(a/b4)
փոփոխության պատճառներ(a/b4)
առկա ռիսկ(a/b/c4)
ուղղորդում է դեպի
վավերագրում(a/c3)
Կարիքների գնահատում
պահանջում է գնահատում
ներկա կիրառություն(a/b4)
նախատեսվող հետագա կիրառություն(a/b4)
թույլ է տալիս
պահանջելով
Ա-Վ գործողությունների գնահատում
որը պահանջում է
հետազոտություն(a/b/c4)
Գործողությունների պլանավորում և կազմակերպում
որը գիտարկում է
առողջություն և անվտանգություն(a3)
օրենսդրություն(a2)
ապահովագրություն(a2)
նախագծի ժամանակացույց(c3)
ֆինանսներ(a3)
սարքավորումներ և հարմարություններ(a3)
որպեսզի կատարի/իրականացնի
ուղղորդելով դեպի
Ա-Վ գործողություններ
պահանջելով
մշտադիտարկում(a/b5)
հասնելու համար
բարելավելու համար
կարող է ուղղորդել դեպի
նոր գիտելիք
կարող է ուղղորդել դեպի
Արդյունք
հարմարեցում(c4)
որից հետո
ռիսկի փոփոխության գնահատում(b4)
արդյունքի հաջողության գնահատում(a4)
արդյունքի տարածում(a3)
որոշել հետագա գործողությունները(b4)
տարածում
որին հաջորդում է
Հետխորհրդատվություն
որը ներառում է
բանավոր ներկայացում
որը տրամադրում է
հրատարակություն
որը կարող է դառնալ մասը
ուղեցույց(c4)
հետագա աշխատանքի ժամանակացույց(b3)



Պատկեր 3. 7-րդ մակարդակի գիտելիքի և հմտությունների քարտեզ



ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայեցակարգի քարտեզագրումը ստեղծում է իրականության կոնկրետ պատկեր, ներկայացնելով իրավիճակ կամ երևույթ, այդպիսով նույնականացնելով առանցքային հայեցակարգերը իրենց համապատասխան փոխկապակցվածության հետ: Այն արտաքին տեսք է տալիս առաջարկներին, որոնք դյուրացնում են իրավիճակի ընկալումը՝ թույլ տալով տեղեկատվական ուսումնասիրություն կատարել, որը բերում է հարաբերակցային կառուցվածքի բացահայտմանը: Քարտեզում, ցույց տրված պատկեր 2-ում և 3-ում, յուրաքանչյուր հայեցակարգ ներկայացված է հանգույցի ձևով, որը նույնականացվում է կարճ անվանմամբ: Կապերին տրվել են նկարագրական բայեր: Հանգույցների և նկարագրական կապերի համադրությունը ձևավորում են առաջարկը, որը ներկայացնում է իմաստաբանական միավոր: Այս դեպքում դրանք իմաստալից ձևակերպումներ են կոմպետենտության տարբեր ոլորտների մասին: Կապերն ուղղորդված են և պիտակավորված հարաբերությունների պարզ բացատրությամբ, այդպիսով ստեղծում են հիերարխիկ կառուցվածք, որը տեղափոխվում է ավելի ընդհանուր կենտրոնական ողնաշարից դեպի ավելի մանրամասնված ծայրամասեր: Քարտեզը կարող է մեկնաբանվել մի շարք ձևերով.

Ամրակայման-վերականգնման մասնագետի տեսանկյունից

Քարտեզը հստակորեն մատնանշում է ամրակայման-վերականգնման գործընթացները, որոնց արդյունքը ցուցադրում է պրոֆեսիոնալ ամրակայող-վերականգնողի՝ որպես «փոփոխության կառավարման» մեջ առանցքային ներդրում ունեցողի դերը: Այն նույնականացնում է կարողությունների մակարդակն ու տեսակը, որոնք հատուկ են այս գործընթացին և պահանջում են մշակութային նշանակության ու ֆիզիկական ամբողջականության հավասարակշռված ու որակյալ բացահայտում և պահպանության ապահովում: Մեկնաբանության դյուրացման համար քարտեզը ներկայացնում է այս կարողությունները որպես գործընթաց, որում զետեղված են կանխարգելիչ և շտկող ամրակայումն ու վերականգնումը՝ ներկայացնելով մասնագիտական պարտքը սահմանափակում պահանջող մասնագիտական վարքագծի կանոնակարգի շրջանակում:

Գործընթացի էական մասը ձեռնարկված և՛ որոշումների, և՛ գործողությունների մասնագիտական նորմերի որակի գնահատումն է: Թեև բոլոր մասերը հավասարապես են ներկայացված քարտեզում, իրականում, տվյալ հանգամանքներից կախված, յուրաքանչյուր ոլորտ կստանա դիտարկման տարբեր մակարդակներ: Օրինակ՝ եթե շտկող ամրակայում չի պահանջվում կոնկրետ մշակութային ժառանգության միավորի համար, պետք է դիտարկվեն միայն կանխարգելիչ միջոցառումները: Որոշ հանգամանքներում հնարավոր է, որ անհրաժեշտ չլինի կատարել առարկայի կամ իրավիճակի մանրամասն գիտական հետազոտություն այնտեղ, որտեղ բավարար տեղեկություններ արդեն առկա են: Սա, սակայն, չի ժխտում ամրակայման-վերականգնման բոլոր ասպեկտների ներկայացված լինելու կարիքը, քանի որ ամեն ինչ պետք է դիտարկվի մինչև գործողությունների շարքի ընտրությունը: Ավելին, ակնկալվում է, որ բոլոր ոլորտները պետք է օգտագործվեն այս կամ այն պահին՝ բնորոշ մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում: Եթե մի ոլորտ տևական ժամանակ կիրառված չէ, հնարավոր է՝ անհրաժեշտ լինի, որ անհատն անցնի կրթական ծրագիր, որպեսզի կրկին ձեռք բերի որակավորումների ողջ կազմը:

Քարտեզի կիրառության մի հնարավոր տարբերակն ակրեդիտացիոն համակարգի շրջանակում է: Եթե ընդունված լինի այսպիսի կիրառության համար, ամրակայող-վերականգնողը պետք է ստիպված լինի ցուցադրել, որ կարող է բավարարել չափորոշիչները գործողության յուրաքանչյուր առանձին ոլորտում, որպեսզի օգտագործի իր կոչումը: Սա ակնհայտորեն պետք է կատարված լինի ֆորմալ գնահատման գործընթացի միջոցով: Բացի այդ, քարտեզը կարող է օգտագործվել պրոֆեսիոնալ աշխատողի կողմից որպես ինքնագնահատման գործիք՝ որոշելու համար, թե հետագա մասնագիտական զարգացում ո՞ր ոլորտում է պահանջվում: Կրթական ծրագրերի զարգացման և գնահատման համար իր ունեցած պոտենցիալ կիրառությունը քննարկվում է հաջորդ բաժնում:

Մասնագիտական համատեքստում հայեցակարգային քարտեզը կարող է մեկնաբանվել որպես գործողության առանձին ոլորտները ցուցադրող, նկարագրողական շարք, որը որակավորում է ցանկացած միջամտություն, համաձայնեցնում է իր նպատակը և չափում է արդյունավետությունն ու օգտակարությունը: Այս դեպքում այն կարող է ընթերցվել որպես կոմպետենտության կապակցված ոլորտների գծային շարք հետևյալ կերպ.

Զննություն և ախտորոշում

Նյութերի և տեխնիկաների, փոփոխությունների պատճառների և ներկա ռիսկերի վերլուծությունը պահանջում է փաստացի, հայեցակարգային և ընթացակարգային գիտելիք՝ իրականացվող հմտության միջին մակարդակից մինչև մասնագիտականը:

Գծապատկերն ընդլայնում է այս կատեգորիաները նկարագրելու համար վերլուծության ինֆորմացիան ու մեթոդները, որոնք հասանելի են՝ կրկին ձգտելով ընթացակարգային գիտելիքի, դյուրացնելու համար իրականացումն ու արդյունքները վերլուծելու կարողությունը: Աշխատանքը պետք է կատարվի հմտության պրոֆեսիոնալ մակարդակով:

Կարիքների գնահատում

Առարկայի/հավաքածուի ներկա և ապագա կիրառության վերլուծությունը հիմնված է փաստացի և հայեցակարգային գիտելիքի վրա:

Ամրակայման-վերականգնման գործողությունների ընտրությունը

Գործողությունների ընթացքի գիտակցված ընտրությունը կարգավորվում է հետևյալ ասպեկտների վերլուծությամբ.

- *Ցանկալի արդյունք,* արտահայտված ներկայացման և մեկնաբանության տեսանկյունից, որը պահանջում է հայեցակարգային գիտելիք:
- *Ընդմիջվող բուժումների միջամտություն,* որը պահանջում է հայեցակարգային և ընթացակարգային գիտելիք:
- *Առաջարկվող գործողությունների սահմանափակումներ,* որոնք պահանջում են հայեցակարգային գիտելիք, շահառուների պահանջների ընկալումը պահանջում է փաստացի գիտելիք:
- *Առաջարկվող գործողություններով պայմանավորված ռիսկեր,* որոնք պահանջում են բուժումների հայեցակարգային և ընթացակարգային գիտելիք:
- *Տարբերակներ հետագա կիրառության համար,* որոնք պահանջում են հայեցակարգային գիտելիք:

Գծապատկերն ընդարձակում է այս կատեգորիաները ընդգրկելու համար փաստացի, հայեցակարգային և ընթացակարգային գիտելիք պահանջող էթիկական կանոններն ու նորմերը, տեխնիկական հնարավորություններն ու ֆինանսական ռեսուրսները: Սրանք համարվում են որոշումների կայացման առումով այնպիսի ոլորտներ և գիտելիքի մակարդակներ, որոնք չեն պահանջում մասնագետի հմտություն, որը բարձր կամ վեր է ընդհանուր փոխանցվող հմտություններից: Հասնելով այս կետին՝ կարելի է հաստատել. արդյոք անհրաժեշտ է միջամտություն:

Գործողությունների պլանավորում և կազմակերպում

Ամրակայող-վերականգնող աշխատելու համար բիզնես և կազմակերպչական հմտությունները համարվում են անհրաժեշտ: Սա սովորաբար պահանջում է փաստացի և հայեցակարգային գիտելիք *ապահովագրության, առողջության և անվտանգության, նախագծի իրականացման ժամանակացույցի և սարքավորումների ու հարմարությունների* գնահատման ոլորտներում: Միջին մակարդակի հմտությունն այն մակարդակն է, որը պահանջվում է մասնագիտություն մուտք գործել ցանկացողներից:

Ամրակայման-վերականգնման գործողություններ

Ժամանակի, նյութերի, մարդկանց և հարմարությունների առումով միջին մակարդակի կառավարման հմտություններն անհրաժեշտ են յուրաքանչյուրին, ով ցանկանում է ձեռք բերել այս մասնագիտությունը: Սա պահանջում է փաստացի և հայեցակարգային գիտելիք:

Մասնագիտություն մուտք գործող անհատը պետք է ի վիճակի լինի կիրառելու և վերլուծելու ամրակայման-վերականգնման բուժումների հետ զուգորդվող գործընթացները, որոնք ներառում են կանխարգելիչ և շտկող միջոցառումներ և վերականգնում: Սա պահանջում է փաստացի, հայեցակարգային և ընթացակարգային գիտելիք՝ հմտության պրոֆեսիոնալ մակարդակով:

Ավելին, որպես պրոֆեսիոնալ գործելու համար տվյալ անհատը պետք է ունակ լինի *շարունակաբար մշտադիտարկելու* ընթացակարգերն ու արդյունքները, այդպիսով թույլ տալով, ըստ անհրաժեշտության, *հարմարեցումներ* կատարել: Սա պահանջում է ընթացակարգային գիտելիքի հետ կապված վերլուծություն:

Արդյունքներ

Արդյունքների վերլուծությունը ցանկացած մասնագիտական պրակտիկայի պահանջ է: Այն պետք է ներառի առարկայի *փոփոխության ենթարկվելու ռիսկի գնահատումը,* ձեռք բերված հաջողության մակարդակը և որևէ հետագա գործողությունների որոշումը: Սա պահանջում է ընթացակարգային գիտելիք:

Հետխնամքային խորհրդատվություն

Ամրակայման-վերականգնման գործընթացի կարևոր մաս է հետագա գործողությունների վերլուծությունը: Այն ներառում է կանխարգելիչ խնամքը և խնամքի ու օգտագործման համար համապատասխան ուղեցույցի տրամադրումը: Սա պահանջում է ընթացակարգային գիտելիք: Նման աշխատանքը կարող է նպաստել *ընթացող հետազոտությանը և հետագա հրապարակումներին:*

Կրթության տրամադրման տեսանկյունից

Քարտեզը հզոր գործիք է առաջարկում ողջ Եվրոպայով ամրակայման-վերականգնման կրթության զարգացման համար: Արդեն մշակված կրթական ծրագրում ներկայիս ուսումնական ծրագիրը կարող է քննվել այն ներդրումի տեսանկյունից, որն այն կատարում է հմտության մակարդակը և կոնկրետ ոլորտում գիտելիքը հարստացնելու ուղղությամբ: Դասընթացի անհատական մասերի արդյունավետության պատկերը կարող է, հետևապես, կառուցվել այն քարտեզի կառուցման միջոցով, որն արտացոլվում է պատկեր 3-ում, որը ներկայացնում է յուրաքանչյուր տարրի ներդրումը: Առաջին օրինակում այն կարող է արվել արդյունքների ուսուցման քարտեզագրման միջոցով:

Նման վարժությունն առաջ է բերում գնահատման շրջափուլային գործընթացը, որը համեմատում է դասընթացի բովանդակությունն ու կառուցվածքը մուտք գործելու պահանջների հետ, նույնականացնում է պակասող ոլորտները, ավելացումները, կամ կատարում է խմբագրություններ և ապա վերանայում է քարտեզը, որպեսզի չափի դրանց ազդեցությունը:

Այս մոտեցման հետ առաջացող խնդիրը վերաբերում է կրթող մասնագետների կողմից արդեն բարձրաձայնված փաստացի գիտելիքի և կոնկրետ առաջադրանք կատարելու համար անհրաժեշտ համարվող հմտությունների հատկորոշման պակասին: Սա շրջանցվել է Է.Կ.Կ.Օ.-ի կողմից, քանի որ այն համարվում է չափազանց հրահանգչական, հետևաբար, ուսումնական ծրագրի նկարագրությունն այն է, ինչը քարտեզը չի տրամադրում: Նման հատկորոշումը կախյալ է ազգային իրադրությունից և կոնկրետ պրոֆեսիոնալ մասնագիտացումից, որը դասընթացը նպատակ ունի բավարարել:

Առանձին կրթական հաստատություններից է կախված, իրենց երկրի մասնագիտական մարմինների հետ խորհրդակցությամբ, պահանջվող պրոֆեսիոնալ ամրակայման-վերականգնման տեսակի տեսանկյունից ճշգրիտ բովանդակություն սահմանելը: Այս քարտեզն օգնում է այդ հատկորոշման մեջ՝ սահմանելով կոմպետենտության տարբեր ոլորտները, որոնց հիման վրա ուսումնական ծրագիրը կարող է հաստատվել և որից կարող են զարգանալ մատուցման մանկավարժական ձևերը:

Մինչ քարտեզը կարևոր գործիք է որոշելու համար կոնկրետ առարկայի մակարդակն ու ծավալը և հաջորդականությունը, որում այն դասավանդվում է, այն կարող է նաև օգտագործվել կրթական ծրագրի իր ամբողջության մեջ գնահատման համար: Պարզ ասած, սա կարող է ամփոփվել հետևյալ կերպ. երբ սկզբնակետն ու վերջնակետը հայտնի են, հնարավոր է զարգացնել արդյունավետ ճանապարհ այս երկու կետերի միջև: Սա մեծացնում է այս գործիքի արժեքը, թույլ տալով կրթական ծրագրով առարկայի տարածումը տրամաբանական և հաստատուն առաջադիմական ձևով, այդպիսով բարելավելով գիտելիքի յուրացումն ու համապատասխան հմտությունների զարգացումը: Այս մոդելի կիրառումը ողջ Եվրոպայով տարբեր կրթական ծրագրերի համար կլինի հետագա հետազոտության առարկան:

ԵՈՇ 7-րդ մակարդակի ամրակայման-վերականգնման համար քարտեզի կառուցումն ու մեկնաբանությունը ներկայացնելուց հետո հաջորդ բաժինը կքննի ստորին և վերին մակարդակները:

ԵՈՇ 6-րդ Մակարդակ

6-րդ մակարդակը (պատկեր 4) պահանջում է գիտելիքի մակարդակ, որը պատկերացում է տալիս ամրակայման-վերականգնման գործընթացների մասին և ձգտում է դրանց կիրառման միջին հմտության: Միջին մակարդակի վրա շեշտադրումը սահմանում է ձեռքերի ճկունության՝ որպես ամրակայման-վերա-կանգնման աշխատանքում նշանակալի գործոնի անհրաժեշտությունը:

Դեպի կարիքների գնահատումը և ամրակայման-վերականգնման գործողություն-ների ընտրությունը ուղղորդող՝ հայեցակարգերի և ընթացակարգերի քննադատական ընկալումը զարգացման մեջ է, բայց դեռևս չի հասել բավարար մակարդակի՝ ինքնուրույն որոշում կայացնելու համար:

ԵՈԾ 6-րդ մակարդակի նկարագրիչները

Շրջանակի վրա աշխատելու արդյունքում Է.Կ.Կ.Օ.-ն առաջարկում է 6-րդ մակարդակի նկարագրիչների համար հետևյալ մեկնաբանությունը.

Գիտելիք. տեսությունների ու սկզբունքների քննադատական ընկալումը ընդգրկող՝ աշխատանքի կամ ուսումնառության ոլորտի խորացված գիտելիք: (Եվրոպական համայնքներ, 2008:12)

Է.Կ.Կ.Օ.-ն հատկորոշում է այն այսպես. գիտելիք, որը ձեռք է բերվել ամրակայման-վերականգնման մեջ բակալավրի աստիճանին համարժեք կրթության ժամանակաշրջանից հետո: *Տեսությունների և սկզբունքների քննադատական ընկալումը* թույլ է տալիս անհատին աշխատել ամրակայման-վերականգնման շրջանակի կոնկրետ սահմանափակված ոլորտում՝ պրոֆեսիոնալ ամրակայող-վերականգնողի ղեկավարության ներքո:

Հմտություններ. խորացված հմտություններ, որոնք ցուցադրում են վարպետությունն ու նորարարությունը, աշխատանքի կամ ուսումնառության մասնագիտացման ոլորտում՝ բարդ և անկանխատեսելի խնդիրներ լուծելու համար: (Եվրոպական համայնքներ, 2008:13)

Է.Կ.Կ.Օ.-ն հատկորոշում է այն այսպես. ամրակայման-վերականգնման շրջանակում տեխնիկական առաջադրանքներ կատարելու համար ձեռքերի ճկունության մակարդակ և խնդիրների լուծման բավարար հմտություններ ունենալը: Քանի որ աշխատանքը կատարվում է եզակի մշակութային ժառանգության հետ, անհատները այս մակարդակում ի վիճակի չեն ինքնուրույն գործելու:

Կարողություններ. բարդ տեխնիկական կամ մասնագիտական գործողությունների կամ նախագծերի վարումը, անկանխատեսելի աշխատանքի կամ ուսումնառության համատեքստերում որոշումների կայացման պատասխանատվության ստանձնումը, անհատների և խմբերի մասնագիտական զարգացումը ղեկավարելու պատասխանատվության ստանձնումը: (Եվրոպական համայնքներ, 2008:13)

Է.Կ.Կ.Օ.-ն հատկորոշում է այն այսպես. բարդ տեխնիկական գործընթացներ կառավարելու կարողությունը ամրակայման-վերականգնման սահմանված ոլորտներում և պատասխանատվության ստանձնումը անկանխատեսելի աշխատանքային համատեքստերում ոչ բարդ տեխնիկական առաջադրանքների համար: Թեև նման մարդիկ ունակ են աշխատելու տեխնիկական հարմարանքներով և ստանձնելու ընդհանուր կառավարչական պարտականություններ, նրանք չեն կարող որակավորվել ամրակայման-վերականգնման գործընթացը վերահսկելու համար: Կոմպետենտության այս մակարդակին տիրապետող անհատն ի վիճակի է ղեկավարելու առանձին տեխնիկական անձնակազմ:


Ամրակայման-վերականգնման գործընթաց
պահանջում է
Հետազննություն և ախտորոշում
գնահատմամբ
ոչ նյութական ասպեկտներ(a2)
նյութ և տեխնիկա(a/b3)
փոփոխության պատճառներ(a/b3)
առկա ռիսկ(a/b/c2)
ուղղորդում է դեպի
վավերագրում(a/c3)
Կարիքների գնահատում
պահանջում է գնահատում
ներկա կիրառություն(a/b2)
նախատեսվող հետագա կիրառություն(a/b2)
թույլ է տալիս
պահանջելով
Ա-Վ գործողությունների գնահատում
որը պահանջում է
հետազոտություն
Գործողությունների պլանավորում և կազմակերպում
որը դիտարկում է
առողջություն և անվտանգություն(a2)
օրենսդրություն(a1)
ապահովագրություն(a1)
նախագծի ժամանակացույց(c2)
ֆինանսներ(a2)
սարքավորումներ և հարմարություններ(a2)
որպեսզի կատարի/իրականացնի
ուղղորդելով դեպի
Ա-Վ գործողություններ
պահանջելով
մշտադիտարկում(a/b2)
հասնելու համար
բարելավելու համար
կարող է ուղղորդել դեպի
Նոր գիտելիք
կարող է ուղղորդել դեպի
Արդյունք
հարմարեցում(c2)
որից հետո
ռիսկի փոփոխության գնահատում(b2)
արդյունքի հաջողության գնահատում(a2)
արդյունքի տարածում(a2)
որոշել հետագա գործողությունները(b2)
տարածում
որին հաջորդում է
Հետխորհրդատվություն
որը ներառում է
բանավոր ներկայացում
որը տրամադրում է
հրատարակություն
որը կարող է դառնալ մասը
ուղեցույց(c2)
հետագա աշխատանքի ժամանակացույց(b2)



Պատկեր 4. 6-րդ մակարդակի գիտելիքի և հմտությունների քարտեզ



ԵՈՇ 8-րդ մակարդակ

8-րդ մակարդակը ներկայացնում է ուսուցման սանդղակի բարձրագույն մակարդակը, որը թույլ է տալիս հասկանալ դրա ողջ սպեկտրը: Գնահատման և վերլուծության զգալի տարբերություն կա 7-րդ և 8-րդ մակարդակների միջև: Գնահատումը ենթադրում է փորձի առկայություն և վերլուծության ճշտությունն ու հուսալիությունը գնահատելու կարողություն: Եթե դիտարկենք 7-րդ մակարդակի քարտեզը, որը մուտքն է մասնագիտություն, որքան ամրակայող-վերականգնողը դառնա փորձառու, այնքան նա կբարձրացնի իր հմտություններն ու գիտելիքը: Այն կարելի է պատկերավորել քարտեզի վրա որպես բարձր մակարդակի կոդ և գույն՝ առանձին բջիջներով: Ունեցած առաջադիմությանը զուգահեռ, նոր բջիջները ցույց կտան կոմպետենտության բարձրագույն՝ 8-րդ մակարդակը: Որոշ դեպքերում, սակայն, կոմպետենտությունը կարող է իրականում ընկնել կոչման օգտագործման համար հատկորոշված մակարդակից ներքև, եթե հմտության և գիտելիքի ոլորտները չեն պահպանվում:

Մինչ 7-րդ մակարդակի քարտեզում ներկայացված մասնագիտություն մուտք գործելու մակարդակը հստակ է՝ հմտության ու գիտելիքի զարգացումը այս կետից հետո առանձնահատուկ է յուրաքանչյուր ամրակայող-վերականգնողի համար՝ կախված հանգամանքներից: Հետևաբար, թեև քարտեզը մնում է նույնը, կոդավորումը անհատից անհատ կտարբերվի: Երկու օրինակներ տրված են պատկեր 5-ում և 6-ում՝ փորձառու աշխատող և PhD ուսանող (ասպիրանտ):

Փորձառու աշխատողի հմտությունը, որը պահպանել և բարձրացրել է իր որակավորումը 8-րդ մակարդակ՝ իր ոլորտում շարունակական մասնագիտական զարգացման միջոցով (այդ թվում՝ ընդլայնելով իր գիտելիքները այլ ոլորտներում), նկարագրված է բարձրագույն գիտակ/մետակոգնիտիվ մակարդակի հասնելու տեսանկյունից: Այն պարզորոշ կերպով ներկայացված է գունային կոդավորմամբ պատկեր 5-ի քարտեզում, որը ցույց է տալիս, թե ինչպես գիտելիքն ու հմտությունները կարող են զարգանալ որպես պրոֆեսիոնալ մի քանի տարի աշխատանքից հետո: Իր կոմպետենտությունը զննության և ախտորոշման մեջ բարձրացել է, և նա դարձել է գիտակ ամրակայման-վերականգնման գործընթացների իրականացման և գնահատման մեջ: Նա նաև բարձրացրել է իր կոմպետենտությունը արդյունքների պլանավորման և կազմակերպման գնահատման գործում:

Պետք է, այնուամենայնիվ, ընդունել, որ աշխատողը կարող է ավելի մասնագիտանալ, դառնալով առաջատար գիտակ կոնկրետ բնագավառում, բայց ոչ՝ բարձրացնել իր կոմպետենտությունը այլ ոլորտներում: Այս հիմնավորումը ենթադրում է, որ գիտելիքի և հմտության մակարդակները պարտադիր չէ, որ աճում են հավասար կերպով իր սկզբնական որակավորման բնագավառի բոլոր ասպեկտներում: Նրա գիտելիքի և հմտության մի մասը մնում է 7-րդ մակարդակում:

Երբ ԵՈՇ 8-րդ մակարդակին հասել են թեկնածուական/դոկտորական ծրագրի միջոցով, այն կարող է ունենալ մասնագիտացման բնագավառի նեղացման էֆեկտ: Մինչ ընդարձակ գիտելիքը մնում է նման կամ ընդլայնվում է ավելի մեծ շրջանակով նույն կոմպետենտությամբ, ինչ 7-րդ մակարդակինը, կոմպետենտության մակարդակը հետազոտության բնագավառում, ըստ սահմանման, կբարձրանա՝ դարձնելով անհատին նկատելիորեն ավելի մասնագիտացած: Սա ցուցադրված է հետազոտություն իրականացնող ամրակայող-վերականգնողի օրինակով՝ պատկեր 6-ում, որտեղ գիտելիքը և հմտությունը զննության և ախտորոշման շրջանակում բարձրանում են, մինչդեռ այլ ոլորտները մնում են 7-րդ մակարդակի նման:

ԵՈՇ 8-րդ մակարդակի նկարագրիչները

Է.Կ.Կ.Օ.-ն առաջարկում է հետևյալ մեկնաբանությունը 8-րդ մակարդակի նկարագրիչի համար.

> *Գիտելիք աշխատանքի կամ ուսումնառության բնագավառի ամենախորացված սահմանի վրա և բնագավառների միջև կապակցման սահմանին: (Եվրոպական համայնքներ, 2008:12)*

Է.Կ.Կ.Օ.-ն հատկորոշում է այն այսպես. գիտելիք ամրակայման-վերականգնման ամենախորացված սահմանին և այլ ոլորտների հետ սահմանագծին:

> *Ամենախորացված և մասնագիտացված հմտություններն ու տեխնիկաները, այդ թվում հետազոտության և/կամ նորարարության մեջ քննադատական խնդիրներ լուծելու և առկա գիտելիքը կամ մասնագիտական պրակտիկան ընդլայնելու ու վերասահմանելու համար պահանջվող համադրում և գնահատում: (Եվրոպական համայնքներ, 2008:13)*

Է.Կ.Կ.Օ.-ն հատկորոշում է այն այսպես. ամենախորացված և մասնագիտացված հմտություններն ու տեխնիկաները ամրակայման-վերականգնման բնագավառի շրջանակում, ներառյալ հետազոտության և/կամ նորարարության մեջ քննադատական խնդիրներ լուծելու և առկա գիտելիքը կամ մասնագիտական պրակտիկան ընդլայնելու և վերասահմանելու համար պահանջվող համադրում և գնահատում:


Ամրակայման-վերականգնման գործընթաց
պահանջում է
Հետազնոություն և ախտորոշում
գնահատմամբ
ոչ նյութական ասպեկտներ(a/b4)
նյութ և տեխնիկա(a/b5)
փոփոխության պատճառներ(a/b5)
առկա ռիսկ(a/b/c/d4)
ուղղորդում է դեպի
վավերագրում(a/c3)
Կարիքների գնահատում
պահանջում է գնահատում
ներկա կիրառություն(a/b5)
նախատեսվող հետագա կիրառություն(a/b5)
թույլ է տալիս
պահանջելով
Ա-Վ գործողությունների գնահատում
որը պահանջում է
առողջություն և անվտանգություն(a3)
օրենսդրություն(a2)
ապահովագրություն(a2)
նախագծի ժամանակացույց(c3)
ֆինանսներ(a3)
սարքավորումներ և հարմարություններ(a3)
հետազոտություն(a/b/c6)
Գործողությունների պլանավորում և կազմակերպում
որը դիտարկում է
որպեսզի կատարի/իրականացնի
ուղղորդելով դեպի
Ա-Վ գործողություններ
պահանջելով
մշտադիտարկում(a/b5)
հասնելու համար
բարելավելու համար
կարող է ուղղորդել դեպի
հարմարեցում(c4)
նոր գիտելիք
կարող է ուղղորդել դեպի
Արդյունք
որից հետո
ռիսկի փոփոխության գնահատում(b4)
արդյունքի հաջողության գնահատում(a4)
արդյունքի տարածում(a3)
որոշել հետագա գործողությունները(b4)
տարածում
որին հաջորդում է
Հետխորհրդատվություն
որը ներառում է
բանավոր ներկայացում
որը տրամադրում է
հրատարակություն
որը կարող է դառնալ մասը
ուղեցույց(c5)
հետագա աշխատանքի ժամանակացույց(b3)



Պատկեր 5. 8-րդ մակարդակի գիտելիքի և հմտությունների քարտեզի օրինակ փորձառու ամրակայող վերականգնողի համար

գիտելիքի տեսակներ

a: Փաստացի
b: Հայեցակարգային
c: Ընթացակարգային
d: Մետակոգնիտիվ

գիտելիքի մակարդակներ

1. Հիշել
2. Հասկանալ
3. Կիրառել
4. Վերլուծել
5. Գնահատել
6. Ստեղծել

Հմտության մակարդակների բանալիները

- միայն գիտելիքը
- հիմնային
- միջանկյալ
- արհեստավարժ
- գիտակ


բջիջներից մի քանիսը նույնպես կլինեն վարդագույն և արտացոլում են բարձրագույն մակարդակը, բայց սա կախված կլինի հետազոտության թեմայից
Ամրակայման-վերականգնման գործընթաց
պահանջում է
Հետազնություն և ախտորոշում
գնահատմամբ
ոչ նյութական ասպեկտներ(a/b4)
նյութ և տեխնիկա(a/b4)
փոփոխության պատճառներ(a/b4)
առկա ռիսկ(a/b/c4)
ուղղորդում է դեպի
վավերագրում(a/c3)
Կարիքների գնահատում
պահանջում է գնահատում
ներկա կիրառություն(a/b4)
նախատեսվող հետագա կիրառություն(a/b4)
թույլ է տալիս
պահանջելով
Ա-Վ գործողությունների գնահատում
որը պահանջում է
առողջություն և անվտանգություն(a3)
օրենսդրություն(a2)
ապահովագրություն(a2)
նախագծի ժամանակացույց(c3)
ֆինանսներ(a3)
սարքավորումներ և հարմարություններ(a3)
հետազոտություն(a/b/c6)
Գործողությունների պլանավորում և կազմակերպում
որը դիտարկում է
որպեսզի կատարի/իրականացնի
ուղղորդելով դեպի
Ա-Վ գործողություններ
պահանջելով
մշտադիտարկում(a/b5)
հասնելու համար
բարելավելու համար
կարող է ուղղորդել դեպի
նոր գիտելիք
կարող է ուղղորդել դեպի
Արդյունք
հարմարեցում(c4)
որից հետո
ռիսկի փոփոխության գնահատում(b4)
արդյունքի հաջողության գնահատում(a4)
արդյունքի տարածում(a3)
որոշել հետագա գործողությունները(b4)
տարածում
որին հաջորդում է
Հետխորհրդատվություն
որը ներառում է
բանավոր ներկայացում
որը տրամադրում է
հիրատարակություն
որը կարող է դառնալ մասը
ուղեցույց(c5)
հետագա աշխատանքի ժամանակացույց(b3)



Պատկեր 6. 8-րդ մակարդակի գիտելիքի և հմտությունների քարտեզի օրինակ հետազոտող ամրակայող վերականգնողի համար



Ցուցադրել հիմնավոր հեղինակություն, նորարարություն, ինքնավարություն, գիտական և մասնագիտական ամբողջականություն և անփոփոխ նվիրվածություն նոր գաղափարների կամ գործընթացների զարգացման նկատմամբ աշխատանքի կամ ուսումնառության համատեքստերի առաջնագծում, ներառյալ հետազոտության կատարման մեջ: (Եվրոպական համայնքներ, 2008:13)

Է.Կ.Կ.Օ.-ն հատկորոշում է այն այսպես. ցուցադրել հիմնավոր հեղինակություն, նորարարություն, ինքնավարություն, գիտական և մասնագիտական ամբողջականություն ամրակայման-վերականգնման բնագավառում, այդ թվում՝ անփոփոխ նվիրվածություն նոր գաղափարների կամ գործընթացների զարգացման նկատմամբ՝ աշխատանքի կամ ուսումնառության համատեքստերի առաջնագծում, ներառյալ հետազոտության կատարման մեջ:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ի վերջո, ԵՈՇ 7-րդ և 8-րդ մակարդակներում արտահայտված կարողություններն ու գիտելիքները ներկայացնում են միայն ամրակայող-վերականգնողի մասնագիտացումը, և ոչ թե ամրակայման-վերականգնման լայն բնագավառը: Պետք է ընդունել, որ ամրակայման-վերականգնման մագիստրոսի մակարդակն ունեցող անհատները կարող են ընտրել թեկնածուական հետազոտությամբ շարունակելու ճանապարհը՝ մասնագիտանալով ամրակայման-վերականգնման ոլորտի զուտ հետազոտության մեջ: Կկարողանա՞ն նրանք արդյոք օգտագործել ամրակայող-վերականգնողի կոչումը՝ կախված կլինի նրանց ունեցած դիրքից 7-րդ մակարդակում: Նրանք պետք է որոշեն իրենց մակարդակը տվյալ փոխհարաբերության մեջ:

Է.Կ.Կ.Օ.-ի աշխատանքային խումբը գիտակցում է, որ ամրակայող-վերականգնողից ապահանջվող հմտության և գիտելիքի մակարդակը կարող է տարբերվել՝ կախված նրանց դերի զանազան ասպեկտներից: Կան բազմաթիվ գործոններ, որոնք ամբողջության մեջ հատկանշում են կոմպետենտությունը: Քարտեզներն իրապես կարող են ամրակայող-վերականգնողի համար օգտակար գործիք լինել՝ գնահատելու մասնագետի ուժեղ կողմերը և այն, թե որտեղ կարող է նրա հետագա մասնագիտական զարգացումը շահեկան լինել: Աշխատանքային խումբը առաջարկում է, սակայն, որ սա կոմպետենտության այս բոլոր ոլորտների համադրություն է՝ գործարկված ճիշտ մակարդակի վրա, որը սահմանում է մեր աշխատանքի բնույթը և շնորհում է մասնագիտական կարգավիճակ: Մենք գտնում ենք, որ այս որակավորումների ձևակերպումը կարող է օգտակար լինել ամրակայման-վերականգնման հետ առնչվող այլ մասնագիտությունների միակցող հմտությունները որոշելու գործում: Հուսով ենք, որ դրանք կօգնեն հասնել կրթական բարձր արդյունքների և կաջակցեն հասանելի կրթական ուղիների զարգացման հետագա ամրապնդմանը:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Անդերսոն Լ. Վ., Կրաթուաոհլ Դ. Ռ. (խմբ.) (2001), Կարգաբանություն ուսուցման, դասավանդման և գնահատման համար: Բլումի կրթական նպատակների կարգաբանության վերանայում, ամբողջական հրատարակություն, Նյու Յորք, Լոնգման/**Anderson, L. W.; Krathwohl, D. R.** (Eds.) (2001): A taxonomy for learning, teaching and assessing: A revision of Bloom's Taxonomy of educational objectives: Complete edition, New York: Longman.

Բլում, Բ. Ս., Կրաթուաոհլ, Դ. Ռ. (1956), Կրթական նպատակների կարգաբանություն: Կրթական նպատակների դասակարգում քոլեջի և համալսարանի քննավարների հանձնաժողովի կողմից. Ձեռնարկ 1, Կոգնիտիվ տիրույթ, Նյու Յորք, Լոնգման/ **Bloom, B. S.; Krathwohl, D. R.** (1956): Taxonomy of educational objectives: The classification of educational goals, by a committee of college and university examiners. Handbook 1: Cognitive domain. New York: Longman.

Եվրոպայի խորհուրդ (1985), Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պահպանության կոնվենցիա, Գրանադա/ **CoE** (1985): Convention for the Protection of the Architectural Heritage of Europe. Granada. http://conventions.coe.int/treaty/en/treaties/html/121.htm

Եվրոպայի խորհուրդ (1992), Հնագիտական ժառանգության պահպանության եվրոպական կոնվենցիա (խմբագրված), Վալետա/ **CoE** (1992): European Convention for the Protection of the Archaeological Heritage (revised). Valetta.
http://conventions.coe.int/treaty/en/treaties/html/143.htm

Եվրոպայի խորհուրդ (2005), Հասարակության համար մշակութային ժառանգության նշանակության մասին շրջանակային կոնվենցիա, Ֆարո/ **CoE** (2005): Council for Europe Framework Convention on the Value of Cultural Heritage for Society. Faro.
http://conventions.coe.int/Treaty/EN/Treaties/Html/199.htm

Է.Կ.Կ.Օ. (2001), APEL՝ Եվրոպական ժառանգության և օրենսդրության դերակատարողներ: Ամրակայող-վերականգնողի իրավական և մասնագիտական պարտականությունների ուսումնասիրություն մշակութային ժառանգության պահպանության և ամրակայման մեջ ներգրավված այլ կողմերի տեսանկյունից, Հռոմ, Ռոկոգրաֆիա/ **E.C.C.O.** (2001): APEL – Acteurs du Patrimoine Européen et Legislation. Survey of the legal and professional responsibilities of the Conservator-Restorer as regards the other parties involved in the preservation and conservation of cultural heritage. Rome: Rocografia.

Է.Կ.Կ.Օ. (2004), Մասնագիտական ուղեցույց/**E.C.C.O.** (2004): Professional Guidelines
http://www.ecco-eu.org/about-e.c.c.o./professional-guidelines.html

Է.Կ.Կ.Օ. (2009), Մշակութային ժառանգության ամրակայման-վերականգնման եվրոպական երաշխավորագիր/ **E.C.C.O.** (2009): European Recommendation for the Conservation-Restoration of Cultural Heritage. http://www.coe.int/t/dg4/cultureheritage/heritage/Source/CDPATEP/Plenary_Session/CDPATEP_2009_17_EN.pdf

ԷՆԿՕՌԵ (1997) / Պավիայի փաստաթուղթ/ **ENCoRE** (1997): The Document of Pavia.
http://www.encore-edu.org/encore/DesktopDefault.aspx?tabindex=1&tabid=188

Եվրոպական համայնքներ (2008), Եվրոպական որակավորումների շրջանակ ցկյանս ուսումնառության համար (ԵՈՇ), Բրյուսել, ISBN: 978- 92-79-08474-4/**European Communities** (2008): The European Qualifications Framework for Lifelong Learning (EQF). Brussels, ISBN: 978- 92-79-08474-4
http://ec.europa.eu/education/pub/pdf/general/eqf/broch_en.pdf
Եվրոպական հանձնաժողով (2009), Բրյուսել, ISBN: 978-92-79-09728-7/**European Commission** (2009) ECTS User's Guide. Brussels. ISBN: 978-92-79-09728-7
http://ec.europa.eu/education/lifelong-learning-policy/doc/ects/guide_en.pdf
Եվրոպական խորհրդարան (2005), Հրահանգ 2005/36/ԵՀ Մասնագիտական որակավորումների ճանաչման վերաբերյալ, Եվրոպական միության պաշտոնական հանդես, L255, Հատոր 43, էջ 22-142/ **European Parliament** (2005): Directive 2005/36/EC – On the recognition of professional qualifications. Official Journal of the European Union L255, Vol. 43, p. 22-142. http://ec.europa.eu/internal_market/qualifications/future_en.htm#dir
Նովակ Ջ. Դ., Գոուին Դ. Բ. (1984), Սովորել, թե ինչպես սովորել, Նյու Յորք, Քեմբրիջի համալսարանի հրատարակչություն/ **Novak, J. D.; Gowin, D. B.** (1984): Learning how to learn. New York: Cambridge University Press.
Նովակ Ջ. Դ., Կանաս Ա. Ջ. (2008), Հայեցակարգային քարտեզների վրա հիմնված տեսությունը և ինչպես կազմել և օգտագործել դրանք: Տեխնիկական հաշվետվություն IHMC Cmap Tools / **Novak, J. D.; Cañas, A. J.** (2008): The Theory Underlying Concept Maps and How to Construct and Use Them. Technical Report IHMC Cmap Tools.
ՍԵԿ (2005), Հանձնաժողովի անձնակազմի աշխատանքային փաստաթուղթ՝ դեպի եվրոպական որակավորման շրջանակ ցկյանս ուսումնառության համար. Եվրոպական համայնքների հանձնաժողով / **SEC** (2005): Commission Staff Working Document – Towards a European Qualification Framework for Lifelong Learning. Commission of the European Communities SEC (2005) 957 http://www.lex.unict.it/eurolabor/en/documentation/com/2005/sec(2005)-957en.pdf
Սթենիֆորթ, Ս. (2002), Ամրակայում. նշանակություն, արդիականություն և կայունություն. Ֆորբս մրցանակի դասախոսություն, ներկայացված սեպտեմբերի 10-ին, ՄՀԱ կոնգրեսի ժամանակ Մելբուռնում/ **Staniforth, S.** (2002): Conservation: Significance, Relevance and Sustainability. The Forbes Prize Lecture delivered on Tuesday 10th September, IIC Congress in Melbourne.

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Գրքույկի նկարներն ընտրվել են միայն որպես օրինակ լուսաբանելու համար, թե ինչով են զբաղվում ամրակայող-վերականգնողները: Հետևաբար, ցուցակագրված են միայն էջի համարը, լուսանկարիչը և կայքը, որտեղից լուսանկարը վերցվել է:

2 Սեբաստիան Դոբրուսկին, Հելիկոն ԱԱ, Ալֆեն ան դեն Ռեյն (Նիդերլանդներ) / Sebastian Dobrusskin: Helicon CS, Alphen a/d Rijn (NL)

5 Սեբաստիան Դոբրուսկին, Ֆրանց Գերչի թանգարան, Բուրգդորֆ (Շվեյցարիա)/ Sebastian Dobrusskin: Museum Franz Gertsch, Burgdorf (CH)

7 Սեբաստիան Դոբրուսկին, Բեռնի արվեստի համալսարան (Շվեյցարիա) / Sebastian Dobrusskin: Bern University of the Arts (CH)

9 Սեբաստիան Դոբրուսկին, Բեռնի արվեստի համալսարան (Շվեյցարիա) / Sebastian Dobrusskin: Bern University of the Arts (CH)

10 Սեբաստիան Դոբրուսկին, Բեռնի արվեստի համալսարան (Շվեյցարիա) / Sebastian Dobrusskin: Bern University of the Arts (CH)

11 Լեա Դովալդեր, Քաղաքային արխիվի մնացորդներ, Քյոլն (Գերմանիա) / Lea Dauwalder: Remains of the City Archive, Cologne (D)

12 Մոգենս Ս. Կոխ, Դրեզդենի պետական արխիվ (Գերմանիա) / Mogens S. Koch: State Archive Dresden (D)

17 Քրիստել Մայեր-Վիլմես, աշխատանքային հրապարակը Ֆրիզենբերգի գերեզմանոցում (Շվեյցարիա)/ Christel Meyer-Wilmes: Working Site at the Grave Yard Friesenberg (CH)

18 Սեբիաստիան Դոբրուսկին, Ֆրանց Գերչի թանգարան, Բուրգդորֆ (Շվեյցարիա) / Sebastian Dobrusskin: Museum Franz Gertsch, Burgdorf (CH)

23 Էլկե Մենցել, Բեռնի արվեստի համալսարան (Շվեյցարիա)/ Elke Mentzel: Bern University of the Arts (CH)

24 Ուելի Ֆրից, Պոմիեի փողոց, Նյոշատել (Շվեյցարիա)/ Ueli Fritz: Rue Pommier, Neuchâtel (CH)

28 Սեբաստիան Դոբրուսկին, Բեռնի արվեստի համալսարան (Շվեյցարիա) / Sebastian Dobrusskin: Bern University of the Arts (CH)

29 Անդրեաս Բուդեր, Բեռնի արվեստի համալսարան (Շվեյցարիա) / Andreas Buder: Bern University of the Arts (CH)

30 Անդրեաս Բուդեր, Բեռնի արվեստի համալսարան (Շվեյցարիա)/Andreas Buder: Bern University of the Arts (CH)

32 Օուեն Ստեֆենսոն, Ամրակայում-վերականգնում Ստուդիա Կորր, Գալուեյ (Իռլանդիա) /Owen Stephenson: Conservation-Restoration Studio Corr, Galway (IRL)

33 Սեբաստիան Դոբրուսկին, Բեռնի արվեստի համալսարան (Շվեյցարիա) / Sebastian Dobrusskin: Bern University of the Arts (CH)

35 Սեբաստիան Դոբրուսկին, Բեռնի արվեստի համալսարան (Շվեյցարիա) / Sebastian Dobrusskin: Bern University of the Arts (CH)

39 Սեբաստիան Դոբրուսկին, Բեռնի արվեստի համալսարան (Շվեյցարիա) / Sebastian Dobrusskin: Bern University of the Arts (CH)

47 Սեբաստիան Դոբրուսկին, Բեռնի արվեստի համալսարան (Շվեյցարիա) / Sebastian Dobrusskin: Bern University of the Arts (CH)

Է.Կ.Կ.Օ. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ (I)

Մասնագիտությունը

Հանրահռչակված Ամրակայող-Վերականգնողների Կազմակերպությունների Եվրոպական Միության կողմից և ընդունված իր գլխավոր ասամբլեայի կողմից 2002 թվականի մարտի 1-ին, Բրյուսելում:

Նախաբան

Առարկաները, շինությունները և միջավայրերը, որոնց հասարակությունը վերագրում է առանձնահատուկ գեղագիտական, գեղարվեստական, վավերագրական, միջավայրի, պատմական, գիտական, սոցիալական կամ հոգևոր արժեքներ, որպես կանոն, անվանվում են «Մշակութային Ժառանգություն» և հանդիսանում են գալիք սերունդներին փոխանցվելիք նյութական և մշակութային արժեք:

Քանի որ այն հասարակության կողմից վստահված է ամրակայող-վերականգնողի խնամքին, նա պետք է պատասխանատվություն ունենա ոչ միայն մշակութային ժառանգության նկատմամբ, այլ նաև սեփականատիրոջ կամ օրինական խնամակալի, նախաձեռնողի կամ ստեղծողի, հանրության և գալիք սերունդների նկատմամբ: Ներքոհիշյալ պայմանները ծառայում են մշակութային ժառանգության պահպանությանը՝ անկախ վերջինիս սեփականատիրոջից, տարիքից, ավարտունության աստիճանից կամ արժեքից:

I. Ամրակայող-վերականգնողի սահմանումը

Ամրակայող-վերականգնողը մասնագետ է, որն ունի պատրաստվածություն, գիտելիք, հմտություններ և փորձ ու հասկացողություն գործելու՝ մշակութային ժառանգությունը ապագայի համար պահպանելու նպատակով և համաձայն ստորև շարադրված պատկերացումների:

Ամրակայող-վերականգնողի հիմնական դերը մշակութային ժառանգության պահպանումն է ի շահ ներկա և ապագա սերունդների: Ամրակայող-վերականգնողն իր ներդրումն է ունենում մշակութային ժառանգության ընկալման, գնահատման և ըմբռնման մեջ իր միջավայրի համատեքստի և ֆիզիկական հատկությունների տեսակետից:

Ամրակայող-վերականգնողը հանձն է առնում պատասխանատվություն ռազմավարական պլանի, ախտորոշման հետազննության, ամրակայման նախագծերի գծագրման և վերակենդանացման առաջարկների, կանխարգելիչ ամրակայման, ամրակայման-վերականգնման վերակենդանացումների ու ուսումնասիրությունների և այլ միջամտությունների վավերագրման համար և իրականացնում է դրանք:

Ախտորոշման հետազննությունը բաղկացած է նույնականացումից, բաղադրության որոշումից և մշակութային ժառանգության վիճակի գնահատումից; փոփոխությունների նույնականացումից, բնույթից և աստիճանից; քայքայման պատճառների գնահատումից և անհրաժեշտ վերակենդանացման միջոցառման տեսակի և աստիճանի որոշումից:

Այն ներառում է համապատասխան առկա տեղեկատվության ուսումնասիրությունը:

Կանխարգելիչ ամրակայումը բաղկացած է քայքայումը դանդաղեցնելու և վնասը կանխարգելելու անուղղակի գործողությունից՝ ստեղծելով պայմաններ, որոնք լավագույնը կլինեն մշակութային ժառանգության պահպանության համար այնքանով, որքանով դա համատեղելի է իր սոցիալական օգտագործման հետ:

Կանխարգելիչ ամրակայումը նաև ներառում է ճիշտ վարվելաձևը, փոխադրումը, օգտագործումը, պահումը և ցուցադրումը: Այն կարող է նաև ընդգրկել պատճենների արտադրության խնդիրներ՝ բնօրինակը պահպանելու նպատակով:

Ամրակայումը բաղկացած է հիմնականում ուղղակի գործողությունից՝ իրագործված մշակութային ժառանգության վրա՝ վիճակը կայունացնելու և հետագա քայքայումը դանդաղեցնելու նպատակով:

Վերականգնումը բաղկացած է ուղղակի գործողությունից՝ իրագործված վնասված կամ քայքայված մշակութային ժառանգության վրա՝ իր ընկալումը, գնահատումը և ըմբռնումը դյուրացնելու նպատակով՝ միևնույն ժամանակ հարգելով, որքանով հնարավոր է, դրա գեղագիտական, պատմական և ֆիզիկական հատկությունները:

Վավերագրումը բաղկացած է իրականացված բոլոր ընթացակարգերի ճշգրիտ պատկերավոր և գրավոր արձանագրումից և դրանց ետևում եղած տրամաբանության ներկայացումից: Հաշվետվության կրկնօրինակը պետք է հանձնվի մշակութային ժառանգության սեփականատիրոջը կամ պահնորդին և պետք է մնա հասանելի: Հետագա որևէ պահանջ՝ կապված մշակութային ժառանգության պահվելու, պահպա-

նության, ցուցադրման կամ հասանելիության հետ, պետք է մանրամասնված լինի այս փաստաթղթում:
Արձանագրությունը մնում է ամրակայող-վերականգնողի մտավոր սեփականությունը և պետք է պահպանվի հետագայում հղում կատարելու համար:
Բացի այդ, ամրակայող-վերականգնողի իրավասության շրջանակներում է.

- զարգացնել ծրագրեր, նախագծեր և հետազոտություններ ամրակայման-վերականգնման ոլորտում
- տրամադրել խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն մշակութային ժառանգության պահպանության համար
- պատրաստել մշակութային ժառանգության վերաբերյալ տեխնիկական հաշվետվություններ (բացի իր շուկայական արժեքի վերաբերյալ որևէ դատողություն կատարելուց)
- իրականացնել հետազոտություն
- մշակել կրթական ծրագրեր և դասավանդել
- տարածել հետազննության, վերակենդանացման կամ հետազոտության միջոցով ստացված տեղեկատվությունը
- հանրահռչակել ամրակայման-վերականգնման ոլորտի ավելի խոր ըմբռնումը:

II. Կրթություն և վերապատրաստում

Մասնագիտության ստանդարտները պահպանելու համար ամրակայող-վերականգնողի մասնագիտական կրթությունն ու պատրաստվածությունը պետք է լինի ամրակայման-վերականգնման ոլորտում համալսարանի մագիստրոսի աստիճանի մակարդակի վրա (կամ ճանաչված համարժեքի): Պատրաստվածությունը առավել մանրամասն ներկայացված է «Է.Կ.Կ.Օ. Մասնագիտական ուղեցույց III»-ում:
Ամրակայում-վերականգնումը համալիր և արագորեն զարգացող ոլորտ է: Հետևապես, որակավորում ունեցող ամրակայող-վերականգնողն ունի նոր բացահայտումների մասին տեղյակ լինելու և մասնագիտական գործունեություն ծավալելիս առկա էթիկայի կանոններին համապատասխանությունը ապահովելու մասնագիտական պատասխանատվություն:

III. Տարբերակումը այլ հարակից ոլորտներից

Ամրակայում-վերականգնումը տարբերվում է այլ հարակից ոլորտներից (օրինակ՝ արվեստ ու արհեստներ) նրանով, որ իր առաջնային նպատակը մշակութային ժառանգության պահպանությունն է՝ ի հակադրություն նոր առարկաների ստեղծմանը կամ առարկաների պահպանմանն ու վերանորոգմանը գործառույթային առումով:
Ամրակայող-վերականգնողն առանձնանում է այլ մասնագետներից ամրակայման-վերականգնման ոլորտում իր ստացած հատուկ կրթությամբ:

Է.Կ.Կ.Օ. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ (II)

Էթիկայի Կոդեքս

Հանրահռչակված Ամրակայող-Վերականգնողների Կազմակերպությունների Եվրոպական Միության կողմից և ընդունված իր գլխավոր ասամբլեայում 2003 թվականի մարտի 7-ին, Բրյուսելում:

I. Կանոնների կիրառման համար ընդհանուր դրույթներ

Հոդված 1. Էթիկայի կոդեքսը մարմնավորում է այն սկզբունքները, պարտավորությունները և վարքագիծը, որոնց յուրաքանչյուր ամրակայող-վերականգնող, որը պատկանում է Է.Կ.Կ.Օ.-ին անդամակցող կազմակերպությանը, պետք է ձգտի իր մասնագիտական գործունեությունը ծավալելիս:

Հոդված 2. Ամրակայող-վերականգնողի մասնագիտությունը հանդիսանում է հանրային շահ ներկայացնող գործունեություն և պետք է իրականացվի բոլոր համապատասխան ազգային և եվրոպական օրենքների ու համաձայնագրերի պահպանմամբ, հատկապես նրանց, որոնք վերաբերում են գողացված սեփականությանը:

Հոդված 3. Ամրակայող-վերականգնողը աշխատում է ուղղակիորեն մշակութային ժառանգության վրա և անձնապես պատասխանատու է սեփականատիրոջ, ժառանգության և հասարակության առջև: Ամրակայող-վերականգնողն իրավասու է գործունեություն ծավալել առանց արգելքների իր ազատության ու անկախության համար: Ամրակայող-վերականգնողն իրավունք ունի բոլոր հանգամանքներում մերժել որևէ հայտ, որը նա համարում է հակասող այս Կոդեքսի պայմաններին և ոգուն:
Ամրակայող-վերականգնողն իրավունք ունի ակնկալել, որ ամրակայման-վերականգնման նախագծին (ցանկացած չափի) վերաբերող ողջ համապատասխան տեղեկատվությունը տրվում է իրեն սեփականտիրոջ կամ պահողի կողմից:

Հոդված 4. Կոդեքսի սկզբունքները, պարտավորությունները և արգելքները պահպանելու թերացումը հանդիսանում է ոչ պրոֆեսիոնալ գործունեություն և վատ համբավ կբերի մասնագիտությանը: Յուրաքանչյուր ազգային մասնագիտական մարմնի պատասխանատվությունն է ապահովել, որ իր անդամները հավատարիմ մնան այս Կոդեքսի տառին ու ոգուն, և միջոցներ ձեռնարկել ապացուցված չկատարման դեպքում:

II. Մշակութային ժառանգության նկատմամբ պարտավորությունները

Հոդված 5. Ամրակայող-վերականգնողը պետք է հարգի իր խնամքին վստահված մշակութային ժառանգության գեղագիտական, պատմական և հոգևոր նշանակությունն ու ֆիզիկական ամբողջականությունը:

Հոդված 6. Ամրակայող-վերականգնողը, մշակութային ժառանգության հետ առնչվող այլ պրոֆեսիոնալ գործընկերների հետ համագործակցությամբ, պետք է հաշվի առնի դրա սոցիալական կիրառության պահանջները՝ միևնույն ժամանակ պահպանելով մշակութային ժառանգությունը:

Հոդված 7. Ամրակայող-վերականգնողը պետք է աշխատի բարձրագույն ստանդարտներով՝ անկախ մշակութային ժառանգության շուկայական արժեքի վերաբերյալ որևէ կարծիքից: Թեև հանգամանքները կարող են սահմանափակել ամրակայող-վերականգնողի գործունեության ծավալները, Կոդեքսի նկատմամբ հարգանքը չպետք է վտանգի տակ դրվի:

Հոդված 8. Ամրակայող-վերականգնողը պետք է հաշվի առնի կանխարգելիչ ամրակայման բոլոր ասպեկտները մինչև մշակութային ժառանգության վրա ֆիզիկական աշխատանք կատարելը և պետք է սահմանափակի վերակենդանացումը միայն նրանով, ինչն անհրաժեշտ է:

Հոդված 9. Ամրակայող-վերականգնողը պետք է ձգտի օգտագործել միայն այն արտադրանքները, նյութերը և ընթացակարգերը, որոնք ըստ ներկայումս եղած գիտելիքի մակարդակի չեն վնասում մշակութային ժառանգությանը, շրջակա միջավայրին և մարդկանց:

Գործողությունն ինքնին և օգտագործվող նյութերը չպետք է խանգարեն, եթե առհասարակ հնարավոր է, հետագա ցանկացած հետազննության, վերակենդանացման կամ վերլուծության: Նրանք պետք է նաև համապատասխանեն մշակութային ժառանգության նյութերին և լինեն հեշտորեն կամ ամբողջապես շրջելի, որքան հնարավոր է:

Հոդված 10. Մշակութային ժառանգության ամրակայման-վերականգնման վերակենդանացումը պետք է վավերագրված լինի ախտորոշիչ հետազննության, ցանկացած ամրակայման-վերականգնման միջամտության և այլ կարևոր տեղեկատվության վերաբերյալ գրավոր և պատկերավոր արձանագրություններով: Հաշվետվությունը պետք է նաև ներառի բոլոր նրանց անունները, ովքեր իրականացրել են աշխատանքը: Հաշվետվության կրկնօրինակը պետք է հանձնվի մշակութային ժառանգության սեփականատիրոջը կամ պահողին և պետք է մնա հասանելի: Արձանագրությունը մնում է ամրակայող-վերականգնողի մտավոր սեփականությունը և պետք է շարունակի մնալ ապագայում հղում կատարելու համար:

Հոդված 11. Ամրակայող-վերականգնողը պետք է հանձն առնի միայն այն աշխատանքը, որը ունակ է կատարելու: Ամրակայող-վերականգնողը պետք է ոչ սկսի, ոչ էլ շարունակի վերակենդանացումը, որը չի բխում մշակութային ժառանգության շահերից:

Հոդված 12. Ամրակայող-վերականգնողը պետք է ձգտի հարստացնել իր գիտելիքները և հմտությունները՝ իր մասնագիտական աշխատանքի որակը բարելավելու մշտական նպատակով:
Հոդված 13. Որտեղ անհրաժեշտ է կամ տեղին, ամրակայող-վերականգնողը պետք է համագործակցի այլ մասնագետների հետ և մասնակցի նրանց հետ տեղեկատվության ամբողջական փոխանակմանը:
Հոդված 14. Որևէ արտակարգ իրավիճակում, որտեղ մշակութային ժառանգությունը գտնվում է անմիջական վտանգի տակ, ամրակայող-վերականգնողը, անկախ իր մասնագիտացման ոլորտից, պետք է ցուցաբերի ողջ հնարավոր աջակցությունը:
Հոդված 15. Ամրակայող-վերականգնողը չպետք է հեռացնի նյութը մշակութային ժառանգությունից, եթե միայն դա պարտադիր չէ դրա պահպանության համար կամ այն էապես խոչընդոտում է մշակութային ժառանգության պատմական և գեղագիտական արժեքը: Նյութերը, որոնք հեռացվում են, պետք է պահպանվեն, եթե հնարավոր է, և ընթացակարգը պետք է ամբողջովին վավերագրվի:
Հոդված 16. Երբ մշակութային ժառանգության սոցիալական կիրառությունը անհամատեղելի է դրա պահպանության հետ, ամրակայող-վերականգնողը պետք է քննարկի սեփականատիրոջ կամ օրինական պահողի հետ՝ արդյո՞ք առարկայի պատճենը պատրաստելը կլինի պատշաճ միջանկյալ լուծում: Ամրակայող-վերականգնողը պետք է խորհուրդ տա վերարտադրության պատշաճ ընթացակարգեր, որպեսզի չվնասի բնօրինակը:

III. Պարտավորությունները սեփականատիրոջ կամ օրինական պահողի նկատմամբ

Հոդված 17. Ամրակայող-վերականգնողը պետք է լիովին տեղեկացնի սեփականատիրոջը ցանկացած անհրաժեշտ գործողության մասին և մատնանշի շարունակական խնամքի ամենահարմար միջոցները:
Հոդված 18. Ամրակայող-վերականգնողը սահմանափակված է մասնագիտական գաղտնիությամբ: Մշակութային ժառանգության նույնականացվող հատվածի վերաբերյալ հողում կատարելու համար նա պետք է ստանա սեփականատիրոջ կամ օրինական պահողի համաձայնությունը:
Հոդված 19. Ամրակայող-վերականգնողը պետք է երբեք չաջակցի մշակութային ժառանգության ոլորտում ապօրինի առքուվաճառքին և պետք է ակտիվորեն աշխատի դիմադրել դրան: Այնտեղ, որտեղ սեփականության իրավունքը կասկածի տակ է դրվում, ամրակայող-վերականգնողը պետք է ստուգի տեղեկատվության բոլոր հասանելի աղբյուրները, նախքան որևէ աշխատանք ստանձնելը:

IV. Պարտավորությունները գործընկերների և մասնագիտության նկատմամբ

Հոդված 20. Ամրակայող-վերականգնողը պետք է պահպանի հարգանք գործընկերների բարեխղճության ու արժանապատվության, ամրակայման-վերականգնման մասնագիտության և հարակից մասնագիտությունների ու մասնագետների հանդեպ:

Հոդված 21. Ամրակայող-վերականգնողը պետք է, իր գիտելիքի, ունակությունների, ժամանակի և տեխնիկական միջոցների սահմաններում, մասնակցի ինտերնների ու օգնականների (ասիստենտների) վերապատրաստմանը: Ամրակայող-վերականգնողը պատասխանատու է իր ասիստենտներին և ինտերններին վստահված աշխատանքը ղեկավարելու համար և ունի հիմնական պատասխանատվություն իր ղեկավարության ներքո իրականացված աշխատանքի համար, նա պետք է պահպանի հարգանք և բարեխղճություն այդ գործընկերների նկատմամբ:
Հոդված 22. Այնտեղ, որտեղ աշխատանքը (ամբողջությամբ կամ մասնակիորեն) պայմանագրային հիմունքներով փոխանցվում է այլ ամրակայող-վերականգնողի, ինչ պատճառով էլ որ լինի, սեփականատերը կամ պահողը պետք է տեղյակ պահվի: Սկզբնական ամրակայող-վերականգնողը, ի վերջո, պատասխանատու է աշխատանքի համար, եթե միայն նախորդող կարգավորումները չեն հավաստում հակառակը:
Հոդված 23. Ամրակայող-վերականգնողը պետք է ներդրում ունենա մասնագիտության զարգացման մեջ՝ կիսվելով փորձով և տեղեկատվությամբ:
Հոդված 24. Ամրակայող-վերականգնողը պետք է ձգտի հանրահռչակել մասնագիտության ավելի խոր ըմբռնումը և այլ մասնագետների ու հանրության շրջանում ամրակայման-վերականգնման մասին առավել իրազեկումը:
Հոդված 25. Ամրակայման-վերականգնմանը վերաբերող արձանագրությունները, որոնց համար ամրակայող-վերականգնողը պատասխաատու է, իր մտավոր սեփականությունն են (իր ծառայության մատուցման պայմանագրի դրույթները հաշվի առնելով): Նա իրավունք ունի ճանաչվել որպես աշխատանքի հեղինակ:
Հոդված 26. Մշակութային սեփականության առևտրի մեջ ներգրավումը համատեղելի չէ ամրակայող-վերականգնողի գործունեության հետ:
Հոդված 27. Երբ պրոֆեսիոնալ ամրակայող-վերականգնողը հանձն է առնում աշխատանքը, որը դուրս է ամրակայման-վերականգնման շրջանակից, նա պետք է համոզվի, որ այն հակասության մեջ չի մտնում այս Կոդեքսի հետ:
Հոդված 28. Մասնագիտության արժանապատվությունն ու վստահությունը պահպանելու համար, ամրակայող-վերականգնողը իր աշխատանքի առնչությամբ պետք է օգտագործի հանրայնացման միայն պատշաճ և տեղեկատվական ձևերը: Առանձնահատուկ խնամք պետք է ցուցաբերվի տեղեկատվական տեխնոլոգիայի (ՏՏ) առնչությամբ, որպեսզի հնարավոր լինի խուսափել սխալ, մոլորեցնող, ապօրինի կամ ոչ իրավասու տեղեկատվության տարածումից:

Երախտագիտություն

Ամրակայող-վերականգնողների Կազմակերպությունների Եվրոպական Միությունը (Է.Կ.Կ.Օ.) պատրաստեց Է.Կ.Կ.Օ. Մասնագիտական Ուղեցույցը՝ հիմնվելով ամրակայմանը-վերականգնմանը և ժառանգությանը վերաբերող ազգային ու միջազգային փաստաթղթերի ուսումնասիրության վրա: «Ամրակայող-վերականգնող. մասնագիտության սահմանումը» (ԻԿՕՄ-ԿԿ (ԻԿՕՄ-Ամրակայման հանձնաժողով), Կոպենհագեն, 1984) Է.Կ.Կ.Օ.-ի կողմից ընդունված առաջին փաստաթուղթն էր:

Է.Կ.Կ.Օ. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ (III)

Կրթություն

Հանրահռչակված է Ամրակայող-Վերականգնողների Կազմակերպությունների Եվրոպական Միության կողմից և ընդունված է իր գլխավոր ասամբլեայի կողմից 2002 թվականի մարտի 1-ին, Բրյուսելում:
Թարմացված է Գլխավոր ասամբլեայի կողմից 2004 թվականի ապրիլի 2-ին, Բրյուսելում:

I. Ամրակայման-վերականգնման ոլորտում կրթության հիմնական նպատակները

Կրթությունը պետք է հիմնված լինի մասնագիտության բարձրագույն ստանդարտների վրա, ուղղված մշակութային ժառանգության եզակիության և իր գեղագիտական, գեղարվեստական, վավերագրական, միջավայրային, պատմական, գիտական, սոցիալական կամ հոգևոր նշանակության նկատմամբ հարգանքի ձևավորմանը: Կրթությունը ավարտելուց հետո շրջանավարտները պետք է կարողանան պատասխանատվությամբ աշխատել մշակութային ժառանգության ամրակայման-վերականգնման ոլորտում, այդ թվում՝ ավելի մասնագիտացված տեխնիկական, գիտական և գեղարվեստական ասպեկտներում: Նրանք պետք է ի վիճակի լինեն համագործակցելու մշակութային ժառանգությամբ զբաղվող այլ մասնագետների հետ: Շրջանավարտները պետք է ունակ լինեն անկախ հետազոտություն կատարելու ամրակայման-վերականգնման և պատմական տեխնոլոգիայի ու տեխնիկայի ոլորտում: Կրթությունը նաև միտված է զարգացնելու բոլոր այլ ունակությունները, ինչպես շարադրված է «Է.Կ.Կ.Օ. Մասնագիտական Ուղեցույց I»-ում:

II. Կրթության մակարդակը

Որպես որակավորում ունեցող ամրակայող-վերականգնող՝ մասնագիտություն մուտք գործելու համար նվազագույն մակարդակը պետք է լինի մագիստրոսի աստիճանը (կամ ճանաչված համարժեքը): Սրան պետք է հասնել համալսարանում ամրակայման-վերականգնման ոչ պակաս, քան 5 տարի լիաժամ ուսուցմամբ (կամ ճանաչված համարժեքի մակարդակով), և այն պետք է ներառի կառուցվածքային առումով լավ մշակված գործնական փորձառության ծրագրեր: Դրան պետք է հաջորդի PhD մակարդակում ուսուցումը շարունակելու հնարավորությունը: Եվ տեսական կրթությունը, և՛ գործնական վերապատրաստումը կարևորագույն նշանակություն ունեն և պետք է կազմակերպվեն հավասարակշռության մեջ: Ավարտական քննության բարեհաջող ավարտից հետո թեկնածուին շնորհվում է իր աստիճանը կամ դիպլոմը: Ուսանած

մասնագիտացումների վերաբերյալ հղումը պետք է կատարվի: Կախված ազգային մակարդակում եղած իրավիճակներից, կարող է նաև տեղին լինել մասնագիտական փորձառությունը գնահատելը՝ հաստատելու համար ամրակայող-վերականգնողի էթիկայի և կոմպետենտության առումով իր մասնագիտացումով աշխատելու ունակությունը:

III. Գործնական վերապատրաստումը

Գործնական վերապատրաստումը պետք է ընդգրկի բնօրինակ հանդիսացող առարկաների վերակենդանացումը՝ հատկապես հարմար համարվող դիդակտիկ նպատակների համար: Ընտրված առարկաները պետք է ընձեռեն լավ վավերագրված դեպքի ուսումնասիրության (case study) համար նյութ, այդ թվում՝ տեխնիկական հետազննություն, ախտորոշում և հարակից վերակենդանացում: Իրենց կրթության հենց սկզբից այդպիսի դեպքի ուսումնասիրությունները ստիպում են ուսանողներին հասկանալ յուրաքանչյուր առարկան՝ որպես եզակի դեպք՝ ամենագործնական ուղղվածություն ունեցող ձևով: Բացի այդ, դեպքի ուսումնասիրությունները առաջարկում են լավագույն հնարավորությունն ամրակայման-վերականգնման բոլոր տեսական, մեթոդաբանական և էթիկական ասպեկտները գործնական վերապատրաստման մեջ ինտեգրելու համար: Պատմական տեխնիկաների, տեխնոլոգիայի ուսումնասիրությունը և հարակից նյութերի արտադրական գործընթացները խրախուսվում են, քանի որ դրանք նպաստում են մշակութային ժառանգության ֆիզիկական, պատմական և գեղարվեստական ասպեկտների ավելի լավ ըմբռնմանը:

IV. Տեսական ցուցումներ

Գիտության և հումանիտար գիտությունների միջև հավասարակշռությունը անփոխարինելի է տեսական ցուցումների համար: Տեսական առարկաները պետք է սահմանված լինեն ամրակայման-վերականգնման ոլորտում մասնագիտացմամբ և պետք է ներառեն.

- Ամրակայման-վերականգնման էթիկական սկզբունքներ
- Գիտություն (օրինակ՝ քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, հանքաբանություն, գույնի տեսություն)
- Հումանիտար գիտություններ (օրինակ՝ պատմություն, հնագրություն, արվեստի պատմություն, հնագիտություն, ազգագրություն, փիլիսոփայություն)
- Նյութերի և տեխնիկաների, տեխնոլոգիայի և արտադրական գործընթացների պատմություն
- Քայքայման գործընթացների նույնականացում և ուսումնասիրություն
- Մշակութային սեփականության ցուցադրում և տեղափոխում
- Ամրակայման, կանխարգելիչ ամրակայման և վերականգնման տեսություն, մեթոդներ և տեխնիկաներ
- Առարկաների կրկնօրինակների պատրաստման մեջ ընդգրկված գործընթացներ
- Վավերագրման մեթոդներ

- Գիտական հետազոտության մեթոդներ
- Ամրակայման-վերականգնման պատմություն
- Իրավական խնդիրներ (օրինակ՝ մասնագիտական կանոնադրություններ, միջազգային ժառանգության մասին օրենք, ապահովագրություն, բիզնես և հարկային օրենք)
- Կառավարում (հավաքածուներ, անձնակազմ և ռեսուրսներ)
- Առողջություն և անվտանգություն (այդ թվում՝ շրջակա միջավայրի խնդիրներ)
- Հաղորդակցման հմտություններ (այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաներ):

Հայերեն թարգմանությունը իրականացրեց՝

ՌՕՔԵՄՓ մշակութային ժառանգության արժևորման, կառավարման և պահպանության տարածաշրջանային կենտրոնը (Հայաստանի ազգային պատկերասրահի Հայ-իտալական մշակութային ժառանգության կենտրոն (ՌՕՔԵՄՓ կենտրոն) մասնաճյուղ)

Թարգմանիչ՝ Գայանե Բաբայան
Խմբագիր՝ Անի Ավագյան

Translation into Armenian Implemented by:
ROCHEMP Regional Office for Cultural Heritage Enhancement, Management and Protection
(Armenian-Italian Cultural Heritage Center Branch of the National Gallery of Armenia)

Translator: Gayane Babayan
Editor: Ani Avagyan

National Gallery of Armenia
Str. Aram 1, Yerevan 0010, Armenia
(+37410) 580812
galleryarmenia@yahoo.com
www.gallery.am

Regional Center for Cultural Heritage
Enhancement, Management & Protection
(+37499) 540005
info@rochemp.org
www.rochemp.org

© Հայաստանի ազգային պատկերասրահ, 2020
© ՌՕՔԵՄՓ կենտրոն, 2020

Երևան 2020